

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ
ԽՄԲԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թ.





Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

2009 թվականից Դիտորդական խմբի աշխատանքները կազմակերպվում են Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Դիտորդական խմբի կոորդինատները.

ՀՀ ք.Երևան, Սարմենի 60,

հեռ. +374 10 52 81 87

Թեժ գիծ - 077 85 99 66

Էլ. Փոստ - info@policemonitoring.org

www.policemonitoring.org

Բովանդակություն

Ներածություն 5

Մոնիթորինգի մեթոդաբանություն 8

1. ԳԼՈՒԽ

Անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող

վերաբերմունքի, պատժի և խոշտանգման դեպքերը 10

2. ԳԼՈՒԽ

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահված անձանց մասին տեղեկություն և

իրավունքների հետ կապված խախտումները 16

3. ԳԼՈՒԽ

Բուժզնության և բուժօգնության հետ կապված

խնդիրների վերլուծություն 26

4. ԳԼՈՒԽ

Ձերբակալվածների պահման պայմանների մասին վերլուծություն 30

5. ԳԼՈՒԽ

Ընթացիկ հաշվետվությունների վերլուծություն 33

6. ԳԼՈՒԽ

ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները 34

ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբ	ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբ
ՁՊՎ	Ձերբակալված անձանց պահելու վայր
ՀՀ ԱՆ Դիտորդական խումբ	ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբ
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ԽԿԿ	Եվրոպայի խոշտանգումների կանխարգելման կոմիտե

Ներածություն

Այս հաշվետվությունով ներկայացվում է ՀՀ ոստիկանության ձեռքարկված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2015թ-ի գործունեությունը՝ ՀՀ ՁՊՎ-ներում տիրող իրավիճակը և մարդու իրավունքների խախտման դեպքերը: Փորձ է արվել հասկանալ այդ խախտումները ծնող պատճառները ու գտնել դրանք հետագայում բացառելու հնարավոր միջոցներ: Հիշեցնենք, որ Խումբը գործում է Ձեռքարկված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի հիման վրա, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի 2005թ-ի թիվ 1-Ն հրամանի հիման վրա:

Դիտորդական խումբը ոստիկանությունում ձեռքարկվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող հասարակական վերահսկողություն իրականացնող մարմին է և գործում է հասարակական հիմունքներով: Խմբի նպատակն է՝

- ✓ ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների ապահովման վերահսկողությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը ՁՊՎ-ների հիմնախնդիրների մասին իրազեկելը
- ✓ ՁՊՎ-ներում մարդու իրավունքների խախտման դեպքերի բացահայտումը և կանխումը,
- ✓ ՁՊՎ-ներում իրավիճակի վերլուծության հիման վրա եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և հասարակությանը
- ✓ ՁՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության և այլ իրավական ակտերի ուսումնասիրումը, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր նախապատրաստելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Խումբը կազմավորվել է 2006թ-ից և գործում է մինչ օրս: Իր աշխատանքային գործունեության ընթացքում յուրաքանչյուր տարի հրապարակել է տարեկան զեկույցներ և հանդես եկել հրատապ հաշվետվություններով, որոնք ուղղված են եղել հասարակությանը ներկայացնելու ՁՊՎ-ներում տիրող օբյեկտիվ իրավիճակը, բարձրաձայնվել են բացահատված խնդիրները և փորձ է արվել լուծումներ գտնել խնդիրները վերացնելու ուղղությամբ:

Համեմատության մեջ Խումբը կարող է արձանագրել, որ էապես բարելավվել են ՁՊՎ-ներում տիրող իրավիճակը.

Պահման պայմաններ՝

1. հիմնովին վերանորոգվել և վերաբացվել է ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Մասիսի ՁՊՎ-ն,
2. վերանորոգման աշխատանքներ են տարվել ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տաշիրի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսիանի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Ճամբարակի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի ՁՊՎ-ում:

Անվճար սննդով ապահովելու վերաբերյալ՝

1. 2015թ-ի հունվարի 1-ից ՁՊՎ-ում պահվող անձանց օրեկան տրամադրվող անվճար սննդի գումարի չափը բարձրացվել է. նախկին 690 ՀՀ դրամի փոխարեն տրվում է 830 ՀՀ դրամ (20.3% ավելին), հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին 790 ՀՀ դրամի փոխարեն՝ 980 ՀՀ դրամ (24.1% ավելին):

ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների պահպանման վերաբերյալ՝

1. Նախորդ 2014թ-ի համեմատ՝ 40% ուլ նվազել է անձանց արգելաքնի տակ պահելու նախատեսված 72 ժամից ավել պահելու խախտումները:
2. Հիմնովին լուծվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ կետով նախատեսված պահանջների պահպանումը՝ այն է այլևս կալանավորված անձիք ՁՊՎ-են ընդունվում բացառապես վարույթն իրականացնող մարմնի և դատավորների կողմից ներկայացրած որոշումների հիման վրա: Բացառապես տարվա ընթացքում մեկ երկու դեպքի:

2015թ-ի ընթացքում գրանցված առաջընթացները կներկայացվեն զեկույցում:

Հավելենք, որ դեռևս առկա են բազում խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն, շարունակվում են մարդու իրավունքների խախտումները (մանրամասն տես զեկույցում):

2015թ-ի ընթացքում Խումբը կատարել է թվով 10 պլանային և թվով 9 արտապլանային այցելություններ, որի արդյունքում հավաքագրված փաստերը ներկայացվում է զեկույցում:

Զեկույցում Խումբը առանձնացրել է հետևյալը՝

Անդրադարձել է ՁՊՎ ընդունված ձերբակալված անձանց մարմնական վնասվածքների թվի ավելացմանը, որպես անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման հնարավոր դեպքերի արդյունք,

Կատարել է ՁՊՎ ընդունված ձեռքարկված անձանց մարմնական վնասվածքների տվյալների մանրամասն վերլուծություն՝ ըստ ՁՊՎ-ների,

Մանրամասն վերլուծություն է կատարվել ՁՊՎ ընդունված անձանց իրավունքների պահպանման և արձանագրված խախտումների վերաբերյալ:

Խումբը կարևորելով ՁՊՎ-ներում պահվող անձանց առողջության պահպանումը՝ առանձին գլխով անդարադարձ է կատարել տրամադրվող առաջին բուժօգնությանը և բուժզննությանը:

Ուսումնասիրելով 2015թ-ի տարեկան հաշվետվությունը՝ կգտնեք առանձին վերլուծություններ 2015թ-ի ընթացիկ հաշվետվությունների և դրանց տրված մեկնաբանությունների, ինչպես նաև Դիտորդական խմբի աշխատանքային ձեռքբերումների մասին:

Զեկույցում ներկայացված են Դիտորդական խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների 6 ամսվա /01.01.2015-30.06.2015թթ/ տվյալները:

Մոնիթորինգի մեթոդաբանություն

Մոնիթորինգը բաղկացած է նախապատրաստական մասից (փորձագետների ներգրավում, աշխատանքային պլանի կազմում և վերաբաշխում, ժամանակացույցի կանոնակարգում), տվյալների հավաքագրումից (մոնիթորինգի իրականացում՝ նախատեսված և չնախատեսված այցելությունների միջոցով, ձեռքակալվածների, կալանավորվածների, ՁՊՎ-ի վարչակազմի և հարազատների հետ հարցազրույցի իրականացում, ՁՊՎ-ների պահման պայմանների, ՁՊՎ-ների սանիտարահիգիենիկ վիճակի, բուժսպասարկման, կատարվող իրավախախտումների ուսումնասիրում), արդյունքների ամփոփումից, կանխարգելիչ միջոցառումներից և առաջարկություններից:

Տեղեկատվության հավաքագրման համար Դիտորդական խմբի անդամների կողմից մշակվել են ՁՊՎ-ներում մոնիթորինգ իրականացնելու անհրաժեշտ գործիքներ՝ դիտարկման քարտեր: Տեղեկատվության հավաքագրումը իրականացրել են Դիտորդական խմբի 11 անդամները ՀՀ ոստիկանության գործող 32 ՁՊՎ-ներում: Մոնիթորինգների ընթացքում ուսումնասիրվել են ձեռքակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը և իրավախախտումները, ՁՊՎ-ում ձեռքակալված անձանց պահման պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը, բուժսպասարկումը, սննդի հիմնախնդիրները:

Հետազոտությունները կատարվել են ամբողջ տարվա կտրվածքով, սակայն թվային վերլուծությունները՝ 6 ամսվա՝ սույն թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում 642 ձեռքակալված անձանց շրջանակներում:

Ինֆորմացիայի հավաքագրման համար օգտագործվել են ՁՊՎ-ում լրացվող բոլոր գրանցամատյանները, դիտարկումները և ձեռքակալված կամ կալանավորված անձանց հետ առանձնազրույցները: Դիտորդական խմբի անդամները յուրաքանչյուր այցելությունից հետո ամփոփել են արդյունքները հաշվետվության տեսքով, որտեղ տարանջատվել են ՁՊՎ-ում անձի գտնվելու ընթացքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքների խախտումները, այդ թվում կոնկրետ անձի իրավունքների հետ կապված խախտումները, մարմնական վնասվածքները, բուժօգնության, արտաքին զննության և պահման պայմաններում առկա թերությունները:

Դիտորդական խմբի կողմից հավաքագրված որոշ տեղեկության ճշտությունը ապահովելու համար կրկնակի հետազոտվել են ՁՊՎ-ից ՔԿՀ-ներ տեղափոխված որոշ անձանց տվյալներ՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի հետ համագործակցության միջոցով:

Կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են մոնիթորինգային այցելություններից հետո արձանագրած տվյալ խախտման վերաբերյալ համապատասխան գերատեսչական մարմնին դիմելով՝ մեկնաբանության և կանխարգելիչ միջոցառումների ակնկալիքով:

Շահերի պաշտպանություն իրականացնելու համար որոշ դեպքեր, երբ անձի իրավունքների խախտումը հաստատվել է, փոխանցվել են շահագրգիռ իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին՝ տվյալ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով:

1. ԳԼՈՒԽ

Անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման դեպքերը

Դիտորդական խումբը իր ողջ գործունեության ընթացքում ուշադրության կենտրոնում է պահում ՁՊՎ-ներում անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման հնարավոր դեպքերը: Իր գործունեության ընթացքում մշտապես աշխատել է նման դեպքերը բացահայտելու և հետևողական լինելու, որ մեղավոր անձինք ենթարկվեն պատասխանատվության, որն էլ թերևս հետագայում նման դեպքերի կանխման միջոց է հանդիսանում:

Թերևս հարկ չկա հիշացնել, որ Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ և միջազգային մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիաների վավերացմամբ ստանձնել է պարտավորություն՝ երաշխավորելու անձի արժանապատվության իրավունքը, այդ թվում նաև՝ անմարդկային վերաբերմունքի, խոշտանգման, կամ պատժի չենթարկվելու իրավունքը, ինչը կրում է բացարձակ բնույթ և որևէ պայմաններում չի կարող սահմանափակվել:

Վերը նշված իրավունքի ապահովման, խախտումների բացահայտման և կանխման համար Դիտորդական խումբը մշտապես կարևորել է և առաջնային է համարում մարմնական վնասվածքների պատշաճ արձանագրման հարցը, որոնք կարող են հնարավոր խոշտանգման արդյունքում առաջացած լինել: Այդ կապակցությամբ նաև Խումբը առաջարկել է պատասխանատու մարմիններին օգտվել «Ստամբուլյան արձանագրությամբ»՝ առաջարկվող մեթոդաբանությունից և մարմնական վնասվածքները արձանագրել պատշաճ կերպով¹:

Խումբը ցավով է արձանագրում, որ այս խնդիրը դեռևս չի լուծվել և ՁՊՎ-ներում մարմնական վնասվածքները պատշաճ չեն արձանագրվում. շատ դեպքերում պարզ չէ, թե մարմնական

¹ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ հետաքննության և փաստագրման ձեռնարկ, որը հայտնի է որպես Ստամբուլյան արձանագրություն, հանդիսանում է խոշտանգումների փաստագրման և դրա հետևանքների վերացման միջազգային ուղեցույցների առաջին փաթեթը: Այն 1999 թվականին դարձել է ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթուղթ: 2003 թվականի ապրիլի 23-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը (2006թ.-ից՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ) խրախուսել է պետություններին անդրադառնալ Արձանագրության սկզբունքներին և այն օգտագործել որպես օգտակար և արդյունավետ գործիք՝ խոշտանգումների դեմ պայքարելու համար: Արձանագրության հիմնական հեղինակն է հանդիսանում «Բժիշկներ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության ավագ բժիշկ փորձագետ Վինցենտ Իակոպինոն, ով և ղեկավարել է արձանագրության նախագծման և ստեղծման ծրագիրը: Ստամբուլյան արձանագրությունը, որպես այդպիսին, պարունակում է օգտակար ուղղորդումներ բժիշկների, հոգեբույժների և իրավաբանների համար: Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բժշկական փաստաթղթագրումը կարևոր է դատական վարույթում, մարդու իրավունքների ուսումնասիրությունների և մշտադիտարկման, ինչպես նաև խոշտանգումների գոհերի վերականգնողական աշխատանքների փուլում:

վնասվածքը ի՞նչ բնույթի է, ի՞նչ չափերով: Շատ դեպքերում հստակ չի արձանագրվում, թե մարմնական վնասվածքը կոնկրետ մարդու մարմնի ո՞ր հատվածում է:

Դիտորդական խումբը 2015թ-ի աշխատանքների ընթացքում խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի դեպքերը բացահայտելու նպատակով ուսումնասիրել են ՁՊՎ-ներ մուտք գործած ձերբակալված անձանց մարմնական վնասվածքների վերաբերյալ <<Բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարված գրառումները: Հետազոտվել և վերլուծվել են հավաքագրված տվյալները գործող ՁՊՎ-ներում պահված ձերբակալվածների և նրանց մարմնական վնասվածքների վերաբերյալ:

Դիտորդական խումբը առանձնացրել է յուրաքանչյուր մարզի ՁՊՎ-ներ ընդունված ձերբակալված անձանց քանակը և տվյալ մարզում ձերբակալված անձանց մոտ արձանագրված մարմնական վնասվածքների քանակը:

Փաստորեն ՀՀ մարզային գործող 31 ՁՊՎ-ներում վեց ամիսների ընթացքում ընդհանուր առմամբ պահվել են 386 ձերբակալված անձինք և նրանցից մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունվել են 149-ը` 38,6%: Նշված վեց ամիսների ընթացքում Երևանի ՁՊՎ ընդունվել են 256 ձերբակալված անձինք, որոնցից 98-ը ունեցել են մարմնական վնասվածք` 38,3 %:

Վերլուծություն


6 ամիսների /01.01.2015թ. – 30.06.2015թ./ ընթացքում ՀՀ ոստիկանության մարզային ՁՊՎ-ներ ընդունված ձերբակալված անձանց, նրանց մոտ արձանագրված մարմնական վնասվածքների քանակը և այդ ամենը` տոկոսային հարաբերակցությամբ				
	ՁՊՎ ընդունված ձերբակալված	Մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված ձերբակալված	Տոկոսային հարաբերություն 2015 թվականին	Տոկոսային հարաբերություն 2014 թվականին
Սյունիքի մարզի 4 ՁՊՎ	28	12	42,86%	9,8%
Վայոց Ձորի մարզի 2 ՁՊՎ	5	2	40%	26,3%
Լոռու մարզի 4 ՁՊՎ	46	22	47,82%	1,06%
Շիրակի մարզի 2 ՁՊՎ	38	11	28,95%	1,37%
Արագածոտնի մարզի 3 ՁՊՎ	25	4	16%	10%
Կոտայքի մարզի 3 ՁՊՎ	56	26	46,42%	12,3%
Արմավիրի մարզի 2 ՁՊՎ	57	21	36,84%	9,7%
Արարատի մարզի 2 ՁՊՎ	47	16	34%	2,9%
Տավուշի մարզի 4 ՁՊՎ	47	19	40,43%	9,7%
Գեղարքունիքի մարզի 8 ՁՊՎ	37	16	43,24%	22,9%
Երևանի մարզ 1 ՁՊՎ	256	98	38,28%	39,24%

Դիտորդական խումբը 2014թ-ին իր զեկույցով պատասխանատու անձանց ուշադրությունն էր հրավիրել այն հանգամանքի վրա, որ մարզային ՁՊՎ-ներում մարմնական վնասվածքները գրեթե չեն արձանագրվում: Բերված պատկերից կարելի է ենթադրել, որ 2014թ-ի հետ համեմատ 2015թ-ին մարզային ՁՊՎ-ներում սկսել են արձանագրել մարմնական վնասվածքները: Օրինակ՝ եթե 2014թ-ի ընթացքում պարզվել էր, որ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ-ում չեն արձանագրվում մարմնական վնասվածքները, քանի որ Լոռու մարզի 4 ՁՊՎ-ներում գտնվող անձանց ընդամենը 1,06%-ի մոտ էր արձանագրվել մարմնական վնասվածք, ապա 2015թ-ին կտրուկ աճել է մարմնական վնասվածքի տոկոսային հարաբերությունը՝ 1,06%-ից հասնելով 47,82 %-ի: Միևնույն ժամանակ Դիտորդական խումբը չի բացառում, որ թվերի աճը որոշ մասով նաև պայմանավորված է մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված անձանց քանակի ավելացմամբ:

Եվս մեկ անգամ ցանկանում ենք նշել, որ մարմնական վնասվածքի արձանագրումը ինքնին չի նշանակում, որ արձանագրությունները իրականացվում են պատշաճ ձևով: Խնդիր է հանդիսանում այն հարցը, որ մարմնական վնասվածքների վերաբերյալ Դիտորդական խմբի հավաքագրված տեղեկատվությունը տարբերվում է ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված տվյալներից, ինչը կարող է խոսել այն մասին, որ այդ տեղեկատվությունը մի դեպքում թաքցվում է, մյուս դեպքում պատշաճ չի հավաքագրվում: Պատկերավոր լինելու համար ստորև ներկայացնենք աղյուսակը:

6 ամիսների /01.01.2015թ. – 30.06.2014թ./ ընթացքում ՀՀ ոստիկանության մարզային ՁՊՎ-ներ ընդունված ձերբակալված անձանց քանակը և ըստ ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի նրանց մոտ արձանագրված մարմնական վնասվածքների քանակը						
	Ըստ Դիտորդական խմբի ՁՊՎ ընդունված ձերբ-ների քանակը	Ըստ ՀՀ ոստ. ՁՊՎ ընդունված ձերբ-ների քանակը	Ըստ դիտորդական խմբի մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված ձերբ-ների քանակը	Ըստ ՀՀ ոստ. մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված ձերբ-ների քանակը	Ըստ ՀՀ ոստ. ՀՀ քննչական կոմիտեի տրված մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված ձերբ-ների իրազկումների քանակը	Ըստ ՀՀ քննչական կոմիտեի ՀՀ ոստ. կողմից տրված մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված ձերբ-ների իրազկումների քանակը
Սյունիքի մարզի 4 ՁՊՎ	28	26	12	4	4	1
Վայոց Ձորի մարզի 2 ՁՊՎ	5	4	1	1	1	1
Լոռու մարզի 4 ՁՊՎ	46	48	22	8	7	6
Շիրակի մարզի 2 ՁՊՎ	38	34	11	18	18	25
Արագածոտնի մարզի 3 ՁՊՎ	25	22	4	3	3	5
Կոտայքի մարզի 3 ՁՊՎ	56	53	26	15	15	7
Արմավիրի մարզի 2 ՁՊՎ	57	54	21	8	8	9
Արարատի մարզի 2 ՁՊՎ	47	57	16	10	10	3
Տավուշի մարզի 4 ՁՊՎ	47	43	19	3	3	2
Գեղարքունիքի մարզի 5 ՁՊՎ	37	27	16	7	7	8
Երևանի մարզ 1 ՁՊՎ	256	256	98	98	92	76

Առանձին ուշադրությամբ Դիտորդական խումբը միաժամանակ ուսումնասիրել է ՀՀ ոստիկանության մարզային 10 ՁՊՎ-ների ընդհանուր 386 ձեռքակալվածներից 149-ի մոտ արձանագրված մարմնական վնասվածքները՝ առանձնացնելով 40-ը և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի 256 ձեռքակալվածներից 98-ի մոտ արձանագրված մարմնական վնասվածքները՝ առանձնացնելով 30-ը՝ ըստ տեսակների: Տվյալները փաստում են, որ անձիք ՁՊՎ ընդունվելուց ունեցել են կոնկրետ մարմնական վնասվածքներ, որոնք նույնանման են թե՛ ՀՀ մարզերի և թե՛ Երևան քաղաքի ՁՊՎ-ներում, ինչնը կարող է վկայել, որ դրանք հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հետևանքներ են:



Խումբը մշտապես հայտնել է իր դիրքորոշումը այն մասին, որ մարմնական վնասվածքները իրենց բնույթով, որպես կանոն, հնարավոր է լինում տարբերակել և նույնականացնել, նույնիսկ հնարավոր է լինում պարզել, թե այդ ձեռքակալվածը ոստիկանության որ բաժնից է տեղափոխվել ՁՊՎ. այսինքն, յուրաքանչյուր ոստիկանության բաժին, բաժանմունք, որպես կանոն ունի իր հստակ <<ձեռագիրը>>՝ ինչը Դիտորդական խմբին թույլ է տալիս պնդել, որ այդ ձեռքակալվածների

նկատմամբ տեղի է ունեցել բռնություն և այդ մարմնական վնասվածքները բռնության հետևանքներ են:

Ոստիկանությունը մշտապես փորձում է ներկայացնել, որ անձիք ՁՊՎ են ընդունվում արդեն իսկ մարմնական վնասվածքներով: Իհարկե, անձիք մարմնական վնասվածքները ունենում են մինչև ՁՊՎ ընդունվելը, սակայն հարկ է նշել, որ այդ նույն անձիք մինչև ՁՊՎ ընդունվելը, որպես կանոն, առնվազն երեք ժամ գտնվում են կամ ոստիկանության կամ քննչական կոմիտեի պատասխանատվության ներքո, և հայտնի չէ, թե այդ մարմնական վնասվածքները նրանք ձեռք են բերում մինչև ոստիկանության բաժնամունք հասնելը, թե դրանից հետո:

Խմբի կարծիքով արձանագրված մարմնական վնասվածքներով անհրաժեշտ է իրականացնել քննություն, բայց ոչ տվյալ գործով զբաղվող վարույթն իրականացնող մարմնի կողմից և հարուցել քրեական գործ, որի շրջանակներում անկախ և անկողմնակալ քննության արդյունքում պարզել մարմնական վնասվածքի առաջացման պատճառները:

Խումբը ևս մեկ անգամ շեշտում է, որ ձերբակալվածի նկատմամբ ցանկացած բռնության կիրառում կամ անմարդկային վերաբերմունք անթույլատրելի է, որը, ըստ Խմբի, հնարավոր է նվազեցնել ոստիկանական բաժիններում և բաժանմունքներում ներդնելով արդյունավետ հանրային վերահսկողության մեխանիզմներ: Խումբը ոստիկանական բաժիններում վերահսկողություն իրականացնելու հնարավորություն չունի: Այս երկու խնդիրներն էլ մտահոգիչ են, և Հայաստանի Հանրապետությունը պետք է մշակի և ներդնի այնպիսի մի մեխանիզմ, որով արդյունավետ կերպով հասարակությունը մասնակից կդառնա ոստիկանության բաժիններում և բաժանմունքներում վերահսկողության իրականացմանը, ինչը կարող է բացառել կամ նվազեցնել ոստիկանության բաժիններում բռնության դեպքերը:

Առաջարկություն.

Խումբը առաջարկում է ներդնել արդյունավետ մեխանիզմներ, որով ՀՀ ոստիկանության բաժիններում և բաժանմունքներում հնարավոր կլինի իրականացնել հասարակական վերահսկողություն: Խումբը ևս մեկ անգամ շեշտում է, որ ՁՊՎ-ներում բոլոր մարմնական վնասվածքները պետք է արձանագրվեն հստակորեն, օգտագործելով «Ստամբուլյան արձանագրությամբ» նախատեսված չափանիշները, որի համար ոստիկանության կողմից իր աշխատակիցների, այնուհետև բժշկական կազմի, այդ թվում նաև տեղի շտապօգնության բժիշկների շրջանում պետք է կազմակերպվի սեմինար-պարապմունքներ, մշակվեն անհրաժեշտ ձևաթղթեր և աշխատանքներ տարվեն «Ստամբուլյան արձանագրությամբ» առաջարկվող չափանիշներով մարմնական վնասվածքների արձանագրման ուղղությամբ:

Բացի դա անհրաժեշտ է իրականացնել պատշաճ քննություն՝ պարզելու մարմնական վնասվածքի առաջացման պատճառը և մեղավոր անձանց ենթարկել պատասխանատվության:

Խումբը առաջարկում է ապահովել հարցաքննության թափանցիկությունը, տեսաձայնագրելով ողջ ընթացքը:

2. ԳԼՈՒԽ

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահված անձանց իրավունքների հետ կապված խախտումները


2015թ-ի վեց ամիսների ընթացքում, ըստ Դիտորդական խմբի կողմից արձանագրված տեղեկության, ՀՀ ոստիկանության գործող ՁՊՎ-ներում ընդհանուր առմամբ պահվել է 642 ձերբակալված անձ, որոնցից 244 ձերբակալված ազատ է արձակվել՝ շուրջ 38% :

Դիտորդական խումբը մշտապես բարձրաձայնել է ոստիկանության բաժին բերման ենթարկված անձանց, ձերբակալվածների և ազատ արձակված անձանց մտահոգիչ թվերով : Առաջին հայացքից կարծես թե անձին ազատ արձակելը բխում է պլտերնատիվ խափանման միջոցների կիրառման տրամաբանությունից և ազատ արձակվածների թվի մեծ լինելը դրական միտում է, սակայն իրականում խնդիրը կայանում է նրանում, որ ձերբակալումը օգտագործվում է որպես վերջինիս պատժի ենթարկելու միջոց կամ ճնշում՝ որոշակի տեղեկատվություն ստանալու համար, ինչը չի բխում որևէ իրավական նորմից՝ դրանով կոպտորեն խախտելով անձանց իրավունքները :

Այս խնդիրը բացահայտվել է Դիտորդական խմբի տարիների աշխատանքի ընթացքում արձանագրված փաստերի, ուսումնասիրությունների և բանավոր զրույցների արդյունքում :

Հարկ է ընդգծել, որ անձին ձերբակալելու համար վարույթն իրականացնող մարմինը պետք է ունենա բավարար հիմք, մինչդեռ ներկայացված թվային տվյալները և բարձրացված խնդիրը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր է առանց բավարար հիմքի անձին զրկել ազատությունից, ինչը անթույլատրելի պրակտիկա է :

Ներկայացնում ենք կատարած ուսումնասիրության արդյունքները :



Երևանի ՁՊՎ-ից ազատ են արձակվել ընդհանուր ձերբակալվածների 35,93 %, իսկ ՀՀ մարզերի ՁՊՎ-ներից՝ 39,89 %:

ՀՀ ոստիկանության	Բերման ենթարկված	Բերման ենթարկված ազատ արձակված	Բերման ենթարկված ձերբակալված	Բերման ենթարկված, այլ բաժիններ տեղափոխված և հետագա կարգավիճակը անհայտ	Ձերբակալված և ՁՊՎ-ից ազատ արձակված	Բերման ենթարկված ընդհանուր ազատ արձակված անձանց քանակը %
Արագածոտնի ՄՎ	69	50	8	11	2	89.6 %
Շիրակի ՄՎ	83	72	5	6	1	94.8%
Արմավիրի ՄՎ	200	177	23	0	13	95 %
Արարատի ՄՎ	168	103	27	38	6	83.8 %
Լոռու ՄՎ	278	255	22	1	9	95.3 %
Տավուշի ՄՎ	128	76	4	48	2	98 %
Գեղարքունիքի ՄՎ	143	96	15	32	4	90 %
Կոտայքի ՄՎ	438	377	24	37	13	97.3 %
Սյունիքի ՄՎ	156	132	19	5	10	94 %
Վայոց Ձորի ՄՎ	130	92	0	42	0	100 %
Ընդհանուր	1793	1430	147	224	60	94.5 %

Աղյուսակից կարելի է նկատել, որ ոստիկանության բաժին բերման ենթարկվածների միջինում մոտ 90%-ը ազատ է արձակվել:

Տեսակցության, հեռախոսագանգի, լոզանքի, հանձնունքի և փաստաբան ունենալու իրավունքի հետ կապված խնդիրներ ու թվային տվյալներ.

Ստորև ներկայացվում է տեսակցության, հեռախոսագանգի, լոզանքի, հանձնունքի և փաստաբան ունենալու իրավունքից օգտված անձանց՝ 2014-2015թթ. թվային տվյալների համեմատական պատկերը.

	2014 թվականին		2015թվականին	
ԶՊՎ մուտք գործած անձանց քանակը	1935		1548	
Տեսակցություն	12,2%		14,4 %	
Հեռախոսագանգ	0,41%		2,3 %	
Լոզանք	15,61%		18,47 %	
Հանձնուք	95,4%		90,95 %	
Փաստաբանի ծառայությունից օգտված ձերբակալվածներ	892	46%	637	41 %

Մտահոգիչ վիճակում է գտնվում փաստաբանի ծառայությունից օգտվելու և օգտված անձանց քանակի պատկերը: Մտահոգիչ է այն առումով, որ անձինք արգելանքի վերցնելու պահից (փաստացի անազատության մեջ գտնվելու առաջին իսկ րոպեից) ավելի պակաս են օգտվում պաշտպան ունենալու իրավունքից, որը ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, Եվրոպական կոնվենցիայով և այլ օրենսդրական նորմերով: Առաջընթաց գրանցելու փախարեն տվյալ ոլորտում գրանցվում է հետընթաց՝ 2014թ-ին գրանցված 46% -ը 2015թ-ին նվազել է մինչև 41%: Ընդ որում 2013թ-ի հետ համեմատությամբ այս թիվը նվազել է կրկնակի:

Խուսափելու է պատասխանատու պետական մարմիններին մշտապես հսկողության իրականացնել վերը նշված խնդիրները, աշխատանքներ տանել և պարզել անձանց բերման ենթարկելու բավարար հիմքեր առկա եղել են թե ոչ:

Դիտորդական խումբը, ինչպես իր գործունեության նախորդ տարիներում, այնպես էլ 2015թ-ի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել՝ ԶՊՎ-ներում պահվող անձանց արգելանքի տակ վերցնելու, ձերբակալելու և դրանից բխող իրավունքների խախտումները հայտնաբերելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արձանագրված խախտումները կատարվում են կամ վարույթն իրականացնող քննիչների կողմից, կամ ԶՊՎ վարչակազմի կողմից: Ընդ որում, դրանք կրում են տարաբնույթ բովանդակություն, մասնավորապես՝ անձին արգելանքի վերցնելու պահը ճիշտ չարձանագրելու, օրենքով սահմանված 72 ժամից ավել ԶՊՎ-ում պահելու դեպքերը,

որոնց արդյունքում կոպտորեն խախտվում են ձեռքարկվածի իրավունքները: ՁՊՎ գրանցամատյաններում գրառումները անփույթ կամ սխալներով են կատարվում, ինչի հետևանքով թաքցվում է անձի արգելանքի, ձերբակալման և ՁՊՎ մուտք գործելու իրական ժամանակը:

Ստորև հակիրճ նկարագրվում է 2015թ-ին իրականացված այցելությունների արդյունքում արձանագրված որոշ խախտումներ, իսկ մանրամասն կարող եք ծանոթանալ հրատապ հաշվետվություններից:

Արգելանքի վերցնելու, ձերբակալելու և դրանից բխող խախտումներ

Ըստ ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավական պայմանագրերի՝ անձին անազատության մեջ պահելու դատավարական ժամկետները անհրաժեշտ է հաշվարկել նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից: Հետևաբար վարույթն իրականացնող պատասխանատու մարմինները պարտավոր են անձին արգելանքի վերցնելու պահը արձանագրեն այնպիսի ճշգրտությամբ, որով կբացառվի ժամերի սխալ հաշվարկումը և կապահովվեն անձի իրավունքները:

Դատավարական փաստաթղթերի պատշաճ լրացնելը նախաքննության մարմնի պարտականությունն է և անթույլատրելի է հակառակ մոտեցումը:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դեպք՝ վեր հանած հիմանխնդիրները հաստատելու համար, իսկ ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններում:

Չնայած այն հանգամանքին, որ Դիտորդական խումբը 2015թ-ի մոնիթորինգների ընթացքում հնրավարություն չի ուներել² խորացված ուսումնասիրություններ և համեմատություններ կատարելու ՁՊՎ-ներում առկա գրանցամատյաններում կատարվող գրառումները և անձանց ՁՊՎ-ներ ընդունելու իրավական հիմքերը, այնուամենայնիվ 2015թ-ի ընթացքում արձանագրվել են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, ՀՀ քր. դատ օր-ի 129, 205¹, 130 հոդվածի 3-րդ կետը, 132 հոդվածների խախտումներ:

² 2014թ-ից սկսած Դիտորդական խումբը բարձրաձայնել է այն խնդիրը, որ ՁՊՎ վարչակազմը խմբին թույլ չի տալիս ծանոթանալ անձնական գործում պահվող փաստաթղթերը՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտ է ձերբակալվածի համաձայնությունը: Այս խնդրի լուծման կապակցությամբ Դիտորդական խումբը մի քանի անգամ հանդես է եկել հրապարակային նյութերով, խնդիրը քննարկվել է շահագրգիռ կառույցների մասնակցությամբ: Կազմվում է իրավական ակտում փոփոխություն կատարելու առաջարկություն, որով խումբը կկարողանա անարգել ծանոթանալ այն փաստաթղթերին, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանությանը, դրա հետ չխախտելով անձնական տվյալների գաղտնիության պահպանման սկզբունքը:

Համեմատություն կատարելով 2014թ-ի արդյունքների հետ տեսնում ենք, որ արգելանքի տակ պահելու առավելագույն 72 ժամի խախտումների թիվը նվազել է: Արձանագրվել է օրենքով նախատեսված 72 ժամից մինչև 9 ժամ ավել պահելու դեպքեր:

Օրինակ՝

➤ Ա. Հ-ն, Ա. Ա-ն, Մ Օ-ն և Լ. Ք-ն 08.02.2015թ.-ին ժամը՝ 10:40-ին բերման են ենթարկվել ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի բաժին: Նշված անձիք ձերբակալվել են ՀՀ օրենսդրության խախտումներով՝

- Ա. Հ-ն- 08.02.2015թ.-ին ժամը 20:30, 9 ժամ, 50 րոպե անց
- Ա.Ա-ն-08.02.2015թ-ին ժամը 22:00-ին, 11 ժամ, 20 րոպե անց
- Մ. Օ-ն-08.02.2015թ.-ին ժամը՝ 23:20-ին, 12 ժամ, 40րոպե անց
- Լ. Ք-ն-08.02.2015թ.-ին ժամը՝ 20:00-ին, 9 ժամ, 20 րոպե անց

Հաջորդաբար 3 անձանց դեպքում արգելանքի տակ պահելու 72 ժամը խախտվել է 9 ժամ 15 րոպեով: Իսկ Լ.Ք-ի դեպքում արգելանքի տակ պահելու 72 ժամը խախտվել է 7 ժամ 10 րոպեով:

➤ Վ. Մ -ն ՀՀ ոստիկանության Արամվիրի բաժին բերման է ենթարկվել 17.10.2015թ-ին ժամը 12.50-ին: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում գրանցված է 17.10.2015թ-ի ժամը 15.25-ին ձերբակալելու կամ ՁՊՎ ընդունվելու ասմաթիվը և ժամը: Ավելացնենք, որ ըստ <<Ձերբակալվածներին խցերի դուրս բերելու>> գրանցամատյանի՝ Վ. Մ-ն խցից դուրս է բերվել և դատարան է տեղափոխվել արդեն արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը 72 ժամը լրացած՝ 20.10.2015թ-ին ժամը 13.35-ին:

➤ Մ. Խ-ն ՀՀ ոստիկանության Գավառի բաժին բերման է ենթարկվել 20.03.2015թ-ին ժամը 17.45-ին: Ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 20.40-ին: Մ. Խ-ն խցից դուրս են բերել ընդհանուր իրավասության դատարան տեղափոխելու և խափանման միջոց կիրառելու համար 23.03.2015 թ-ին ժամը 18.15-ին, արդեն իսկ՝ նրա ձերբակալման առավելագույն 72 ժամը լրացած:

Առաջարկություն

ՀՀ ոստիկանությանը առաջարկում ենք անձի անազատության մեջ գտնվելու ժամերը հաշվարկել նրան փաստացի անազատության մեջ վերցնելու պահից, գրանցամատյաններում պարտադիր կատարել գրառում, այն մասին, թե ձերբակալվածը երբ է վերցվել արգելանքի, երբ է բերման ենթարկվել, երբ է կայացվել ձերբակալման վերաբերյալ որոշումը, երբ է մուտք գործել ՁՊՎ և երբ է ազատ արձակվել կամ երբ է տեղափոխվել դատարան՝ խափանման միջոցի հարցի քննարկման համար, հետևողականորեն պահպանել 72 ժամից ավել ձերբակալվածին չպահելու

սահմանադրական նորմի պահանջը: Օրենքը խախտած պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության:

Քննիչների կողմից կատարվող խախտումները

2015թ-ին Խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են նաև քննիչների կողմից՝ անազատության մեջ գտնվող անձանց իրավունքները խախտման դեպքեր:

Մասնավորապես՝ պատշաճ չեն կազմվում ձերբակալման արձանագրությունները, քննչական գործողությունները կատարվում են ժամկետների խախտումներով, անձանց պահում են արգելանքի տակ առավելագույն 72 ժամից ավելի, ձերբակալվածներին ազատ արձակելուց հետո որոշ դեպքերում որոշումներ չեն կազմվում, իսկ որոշ դեպքերում՝ մոտ 30 ժամ անց են ներկայացնում ՁՊՎ և այլն:

Արդյունքում՝ խախտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129, 205¹, 130 հոդվածի 3-րդ կետը, 132 հոդվածները:

Ստորև ներկայացնում ենք փաստերը հաստատող մի քանի դեպքեր, իսկ ավելի մանրամասը կարող էք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններում:

- Ռ.Մ-ն ձերբակալվել է 20.01.2015թ. ժամը 12.30: ՁՊՎ է ընդունվել 21.01.2015թ., ժամը 00.30: 23.01.2015թ. ժամը 18.30 տեղափոխվել է ՔԿՀ, սակայն ՁՊՎ-ի <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկա դատարան տեղափոխելու մասին գրառում:
- Ս. Ա-ն և Մ. Ա-ն-25.06.2015թ. ժամը 10.30-13.00 տեղափոխվել են Մասիսի բաժին՝ քննչական գործողություն կատարելու համար, սակայն ՁՊՎ-ում բացակայում էր քննիչի պահանջագիրը կամ գրությունը:
- Հ. Հ-ն՝ ձերբակալվել է 13.03.2015թ. ժամը՝ 18:00, ՁՊՎ է ընդունվել 14.03.2015թ. ժամը՝ 03:30: քննիչ, քննչական գործողություն 8 ժամից ավել
- Ա. Ս-ն ձերբակալվել է 14.03.2015թ. ժամը՝ 10:23, ՁՊՎ է ընդունվել ժամը 10:40, ազատ է արձակվել 16.03.2015թ. ժամը՝ 21:50: 16.03.15թ. ժամը՝ 16:55-18:15 դուրս է բերվել քննչական սենյակ գործողության համար, քննիչի հայտը բացակայում էր: 16.03.2015թ. ժամը՝ 17:20 տեղափոխվել է քննչական գործողության: ՁՊՎ-ի տարածքից դուրս, քննիչի լրացրած հայտը կիսատ է:
- Հ. Ս-ն, ով անչափահաս է 07.03.2015թ ժամը 17.25-17.55 դուրս է բերվել քննչական փորձարարության ՁՊՎ-ի տարածքից դուրս՝ առանց փաստաբանի և օրինական ներկայացուցչի: Փաստաբանը ներգրավվել է գործին 08.03.2015թ-ին:

Կալանավորված անձիք ՁՊՎ են ընդունվում քննիչների կողմից ներկայացրած գրությունների, ոչ թե որոշումների հիման վրա, որը <<ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խախտում է՝

- Ա. Պ-ն կալանավորի կարգավիճակով 13.05.2015թ-ին ժամը 19.00-ին ընդունվել է ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Վայքի ՁՊՎ՝ առանց համապատասխան որոշման:
- Ա. Մ-ն ՁՊՎ է ընդունվել որպես կալանավոր ՀՀ ՔԿ Արագածոտնի ՄՎ 04.05.15թ. թիվ 49/12-1705/15 գրության հիման վրա: 07.05.2015թ. ժամը 11.40: ՀՀ ԱՆ ՔԿՀ է տեղափոխվել 07.05.2015թ. ժամը 16.45: Ըստ հերթապահ մասի պետի՝ անձանց ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննիչի գրությունը, ոչ թե ձերբակալման արձանագրությունը: ՁՊՎ-ի վարչակազմի համար կալանավորված անձին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննիչի գրությունը, այն դեպքում, երբ <<ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքով կալանավորվածը անձը ՁՊՎ է ընդունվում միայն դատավորի, դատախազի և քննիչի որոշման հիման վրա՝ 3 օր ժամկետով: Նշված գործառույթի վերաբերյալ առկա է նաև հանձնարարական օրենքի տվյալ կետի պահանջը պահպանելու վերաբերյալ:

Առաջարկություն

Դիտորդական խումբը առաջարկում է ՀՀ քննչական կոմիտեին մշտապես ուշադրության կենտրոնում պահել վեր հանված հիմնախնդիրները, ցուցումներ տալ քննիչներին հետևելու օրենքի պահանջներին, անհրաժեշտության դեպքում իրականացնել սեմինար-պարապմունքներ բացահատված խնդիրները շտկելու և հետագայում դրանք բացառելու համար:

Օրենքի դրույթները խախտած վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության, ըստ օրենքի:

ՁՊՎ-ի վարչակազմի կողմից կատարվող խախտումներ

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմի կողմից որոշ դեպքերում թերի կամ խախտումներով են կազմվում ձերբակալված անձանց անձնական գործերը, ՁՊՎ-ում լրացվող բոլոր գրանցամատյանները լրացվում են խախտումներով և ջնջումներով, հարազատների հրազեկումը հեռախոսազանգի միջոցով պատշաճ չի կատարվում, հանձնույթները ժամանակին չեն ընդունվում, լիարժեք չի ապահովվում հարազատների հետ տեսակցության կազմակերպումը:

Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարչակազմի կողմից կատարվող խախտումները որոշ դեպքերում միտումնավոր բնույթ են կրում՝ այլ կատարված

խախտումները թաքցնելու համար, իսկ որոշները՝ մասնագիտական գիտելիքների պակասի հետևանք է:

Արդյունքում՝ արձանագրվել է ՁՊՎ-ի վարչակազմի կողմից ՀՀ Սահմանդրության 16-րդ հոդվածի, ՀՀ քր. դատ. օր-ի 129 հոդվածի 2-րդ կետի, 130 հոդվածի 3-րդ կետի, 132 հոդվածի 2-րդ կետի, 133 հոդվածի, ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի 14-րդ, 11-րդ, 74-րդ և 76-րդ կետերի խախտման դեպքեր:

Ստորև ներկայացնում ենք նման խախտումները հաստատող մի քանի փաստեր, իսկ մյուսներին կարող եք ծանոթանալ խմբի ընթացիկ հաշվետվությունները ուսումնասիրելով:

1. Ըստ ձեռքակալված Դ. Հ-ի, նա ստացել է հանձնուք, բայց համապատասխան գրառումը <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում բացակայում է: Անձին բերման ենթարկելու արձանագրության մեջ գրված է մարմնական վնասվածքի մասին բայց <<Ձեռքակալված անձաց բուժօգնության կամ բուժօգնության >> գրանցամատյանում գրանցված չէ, ինչը օրենքի խախտում է. հնարավորություն չի տալիս պատշաճ ուսումնասիրություն իրականացնել, կարող է նաև իր մեջ պարունակել մարմնական վնասվածքը կոծկելու, թաքցնելու դիտավորություն: ՁՊՎ-ում պահվող ձեռքակալված Դ. Հ-ի անձնական գործը իր համաձայնությամբ, ուսումնասիրելուց, Դիտորդական խումբը արձանագրեց, որ արդեն անազատության մեջ գտնվող անձը անհասկանալի պատճառով 15.05.2015թ-ին ժամը 23.35-ին Սյունիքի մարզային քննչական կոմիտեից ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ բերման է ենթարկվել:
2. Դիտորդական խումբը ընդհանուր ուսումնասիրությունների ժամանակ պարզեց, որ ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի ՁՊՎ-ում չի պահպանվում ինչպես ՀՀ Կառավարության ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքակալվածների պահելու վայրի ներքին կանոնակարգի 11-րդ կետը, այնպես էլ ՀՀ ոստիկանության համապատասխան գերատեսչության կողմից տրված հանձնարարականը՝ այն է, ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձեռքակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել ձեռքակալվածի ընտրած անձին: ՁՊՎ-ում պատասխանատուների կողմից կազմված նոր տեղեկանքի ձևաչափը, որը միանգամից անձի կողմից ստորագրվելով, հրաժարվում է հարազատին տեղեկացնել իր գտնվելու վայրի վերաբերյալ: Ավելին՝ այցելության պահին ՁՊՎ-ում գտնվող 2 կալանավորներից մեկը, հայտնեց, որ ինքը փոխանցել է հեռախոսահամար հարազատներին տեղեկացնելու համար, բայց երկուսի վերաբերյալ է կազմված էր տեղեկանքի նույն ձևաչափը: Խումբը նշվածի վերաբերյալ հրատապ գրությունով դիմել է ՀՀ ոստիկանության պետին և համապատասխան միջոցներ է

ձեռնարկվել, որի ընթացքում իրականացվել է ծառայողական քննություն և արդյունքում՝ տեղեկանքի նման ձևաչափը այլևս չի կիրառվում:

3. Ուսումնասիրությունների արդյունքում Դիտորդական խումբը արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը անարգելք, կարող է մուտք գործել ՁՊՎ և կատարել քննչական գործողություն, այն դեպքում, երբ <<Ձերբակալված և կալանավորված անձնաց պահելու մասին>> ՀՀ օրենքի 48 հոդվածով, որտեղ նշվում է թե ովքեր ունեն անարգելք մուտքի իրավունք վարույթն իրականացնող մարմնի վերաբերյալ ոչ մի գրառում չկա: Տվյալ փաստը նաև հաստատել է ՀՀ ոստիկանության Ապարանի հերթապահ մասի պետը, որ քննիչները անարգելք մուտքի իրավունք ունեն:
4. ՁՊՎ-ի գրանցամատյանները լրացվում են ամբողջությամբ ջնջումներով, որն ըստ Դիտորդական խմբի ոչ թե անփույթ աշխատանքի արդյունք է, այլ որոշ իրավախախտումներ թաքցնելու հետևանք է:
 - Ա. Շ-ն, որպես հետախուզվող ՁՊՎ էր ընդունվել 05.02.2015թ-ին ժամը 07.20-ին և ազատ էր արձակվել 06.02.2015թ-ին ժամը 17.20-ին: Արդյունքում՝ նշված անձը առանց բավարար հիմքի ընդունվել և պահվել էր ՁՊՎ-ում: Ըստ հերթապահ մասի պետի՝ նրա համար Ա. Շ-ին ՁՊՎ ընդունելու հիմք էր հանդիսել 14.03.2014թ-ին քննիչ՝ Ա. Սաֆարյանի հետախուզում հայտարարելու մասին որոշումը և Արարատի և Վայոց Ձորի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Գ. Սարգսյանի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, ՀՀ Սահամանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն, հետախուզվող անձին հայտնաբերելուց հետո պետք է կազմվեր ձերբակալման արձանագրություն և ձերբակալվածին պետք է ներկայացվեր դատարան՝ կալանավորման հարցի քննարկման համար:
 - Խ. Գ-ն ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի, (ջնջումով էր գրված թե օրը և թե ժամը), ՁՊՎ էր ընդունվել է 24.07.2015թ-ին: Համոզված չլինելով, նշենք՝ ժամը 21.30-ին, որովհետև անընթեռնելի է: Ավելացնենք, որ ջնջումը կատարված է այնպես, որ գրանցամատյանը պատռվել էր: Անհասկանալի պատճառներով Գ.Խ.-ն բուժզննություն է անցել 25.07.2015թ-ին: Ավելին՝ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում զննության վերաբերյալ ոչ մի ժամ նշված չէ, որը փորձեցինք պարզել <<Ձերբակալվածներին խցերի դուրս բերելու>> գրանցամատյանում, բայց արդյունքում գրանցամատյանում ընդունվելուց հետո, անձը դուրս չի բերվել, չի տեղափոխվել բուժսենյակ և զննություն չի իրականացվել: Հարկ ենք համարում

տեղեկացնել, որ գրանացամատյանները լրացվում են ջնջումներով և խախտումներով: Օրինակ՝ <<Ձերբակալվածներին խցերի դուրս բերելու>> գրանացմատյանում Գ. Խ-ին 25.07.2015թ-ի ժամը 15.05-ին դուրս են բերել զբոսանքի, բայց ետ վերադարձնելու ժամը նշված չէ: Ավելին՝ հետևյալով եզրակացնում ենք, որ զբոսանքն էլ է ձևական բնույթ կրում, որովհետև երբ հարցնում ենք, ինչու եք ժամը նշել, պատասխանեցին, որ նշել ենք կանխավ, որ տվյալ ժամին, տվյալ անձին դուրս բերենք զբոսանքի:

Առաջարկություն

Խումբը առաջարկում է, որ պատասխանատու անձիք պետք մշտական հսկողության ներքո պահեն վերը նշված հարցերը և հրահանգավորեն ոստիկանության ծառայողներին հետևել փաստաթղթերի պատշաճ արձանագրմանը: Խախտում թույլ տված ծառայողների նկատմամբ կիրառել օրենքով սահմանված պատժամիջոցները: Ըստ անհրաժեշտության՝ կազմակերպեն սեմինար-պարապմունքներ:

3. ԳԼՈՒԽ

Բուժզննության և բուժօգնության հետ կապված խախտումների վերլուծություն

Ինչպես նախկին տարիներում, այդպես էլ 2015թ-ի ընթացքում Դիտորդական խումբը իր ուշադրության կենտրոնում է պահել ՁՊՎ-ում պահվող անձանց բուժզննության և բուժօգնության հետ կապված հարցերը :

Դիտորդական խումբը նախկին տարիներում արձանագրել է, որ ՀՀ-ում գործող մարզային բոլոր ՁՊՎ-ներում արտաքին զննությունը իրականացվում է պատասխանատու ոստիկանի կողմից, իսկ մարմնական վնասվածքներ, ակնհայտ կամ առողջության վերաբերյալ գանգատներ լինելու դեպքում հրավիրվում է շտապ օգնություն : Միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում նշված գործառույթը իրականացնում են բուժակները: Խումբը կարծիք է հայտնել, որ նման աշխատելավոճը և հրավակարգավորումը անընդունելի է, քանի որ ոստիկանները չունեն համապատասխան կրթություն և մասնագիտացված չեն բուժզննության սկզբունքներին և չեն կարող որոշել, թե որ դեպքում է անհրաժեշտ հրավիրել բժիշկ, որ դեպքում՝ ոչ:

Դիտորդական խումբը այս տարի ևս արձանագրում է, որ շարունակվում է նույն կարգի գործողությունը և այս խնդրի լուծման առնչությամբ որևէ քայլ ոստիկանության կողմից արված չէ :

Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկել այս հիմնախնդիրը և հնարավոր լուծումներ գտնել և գործող կարգում փոփոխություններ կատարել, ինչով նվազագույնի կհասցվի ոստիկանության աշխատողի սուբյեկտիվ մոտեցմամբ շտապ օգնություն հրավիրելը :

ՁՊՎ-ներում բուժօգնությունը ցուցաբերվում է հրավիրված շտապ օգնության բժիշկների կողմից: Դիտորդական խմբի ուսումնասիրությունների ընթացքում, ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ 2015թ-ին արձանագրվել է, որ համապատասխան գրանցամատյանում գրառումները կատարում են օտար լեզվով կամ անհասկանալի ձևագրով՝ խախտելով «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ կետի պահանջները : Դա կարող է պատճառ հանդիսանալ անձին ժամանակին անհրաժեշտ բուժօգնություն չցուցաբերելու համար, քանի որ բժշկի առաջարկությունները և հրահանգները իրականացնողները՝ ոստիկանության աշխատակիցները և վարույթն իրականացնող մարմինը կարող են ուղղակի չհասկանալ թե ինչ է առաջարկվել բժիշկների կողմից: 2014թ-ի տարեկան հաշվետվության վերաբերյալ ոստիկանության մեկնաբանություններում նշվում էր, որ ՁՊՎ վարչակազմին հրահանգավորվել է, որ հետևողական լինեն, թիվ 12 գրանցամատյանում բուժաշխատողների կողմից գրառումները կատարվեն հայերեն

լեզվով, մինչդեռ հրահանգավորումից հետո նորից արձանագրվել են դեպքեր, որ գրանցամատյանները բուժաշխատողների կողմից լրացվել են օտար լեզվով :

Նախկին տարիներում Խումբը արձանագրել էր, որ որոշ դեպքերում, երբ հրավիրված բժիշկը նշել է, որ համապատասխան հետազոտության, կոնսուլտացիայի, դինամիկ հսկողության և այլ մասնագիտական գործողություններ իրականացնելու անհրաժեշտություն կա, սակայն որոշ դեպքերում որևէ քայլ չի ձեռնարկվել՝ այն իրականացնելու նպատակով: Տվյալ հիմնախնդիրի միակ բացատրությունը ըստ պատասխանատու ուստիկանների այն էր, որ հրավիրված շտապ օգնության բժշկի կողմից «Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության» գրանցամատյանում կատարված գրառումը բավարար չէ անձին համապատասխան բուժհաստատություն տեղափոխելու համար և անհրաժեշտ է գրավոր եզրակացություն: 2014 թ-ի տարեկան զեկույցի վերաբերյալ ուստիկանության կողմից տրված մեկնաբանությունում նշվում էր, որ նման խնդիր գոյություն չունի և եթե գրանցամատյանում առկա է գրառում, ապա այն կատարվում է, եթե ձերբակալվածը պահվում է ՁՊՎ-ում: Սակայն 2015 թվականի ընթացքում նշված խնդիրը նորից է արձանագրվել. օրինակ՝ ՀՀ ուստիկանության Շիրակի ՄՎ Արթիկի ՁՊՎ ընդունված Լ. Ս-ն 14.06.2015թ-ին գանգատվել է կրծքավանդակի և գլխի ցավերից: Արձանագրվել է հետևյալ մարմնական վնասվածքները՝ գլխի քունքի ձախ կեսին և ձեռքի նախաբազկի շրջանում քերծվածքներ և որովայնի և թիկունքի քերծվածքներ: Շտապ օգնության բժշկի կողմից տրվել է անալգիկ և նշել են, որ անհրաժեշտ է մասնագիտական բուժզննում և բժշկի հսկողություն, սակայն որևէ բուժզննություն հետագայում չի անցել և որևէ բժշկի հսկողության տակ ձերբակալվածը չի գտնվել :

Խումբը արձանագրում է, որ 2015 թվականի ևս արձանագրվել են այնպիսի դեպքեր, ինչպիսիք են հրավիրված բժիշկների կողմից «Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության» գրանցամատյանում ցուցաբերած բուժօգնության, արձանագրված մարմնական վնասվածքների վերաբերյալ համապատասխան գրառումներ չկատարելը: Շատ դեպքերում հրավիրված բժշկի և ուստիկանի կողմից միտումնավոր խախտվում է ՀՀ օրենսդրության պահանջը, որի արդյունքում էլ հնարավոր չի լինում պարզել թե անձը, ում համար հրավիրվել է շտապ օգնություն, ինչ գանգատներ կամ վնասվածքներ է ունեցել, և ինչ օգնություն կամ միջոցներ է ձեռնարկվել: Օրինակ՝ ՀՀ ուստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ-ում Ս. Ս-ի մոտ 20.02.2015թ-ին արձանագրվել է գեմատոմա աչքի վերևի մասում: Հրավիրել են շտապ օգնություն, բայց ոչ մի գրառում բժշկի կողմից չի արվել տրամադրած բուժօգնության վերաբերյալ:

Խմբի կողմից արված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է՝ որոշ ՁՊՎ-ներում անձը գանգատներ չի ունեցել, սակայն ստացել է բուժօգնություն, ինչ պատճառով՝

անհասկանալի է (ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի և ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ-ներ):

Դիտորդական խումբը մեծ հիմնախնդիր է համարել և համարում այն փաստը, որ ոչ մի կերպ հնարավոր չի լինում ապահովել ՁՊՎ-ների բուժսենյակների սանիտարահիգիենիկ վիճակը : Այս խնդիրը արձանագրվել է նաև Դիտորդական խմբի կողմից նախորդ տարիներում հրապարակված հաշվետվություններում և որպես փաստարկ նշվել է, որ հնարավոր չէ բուժսենյակը համատեղված լինի մեկ այլ սենյակի հետ և այնտեղ իրականացվի անհրաժեշտ հիգիենիկ բուժօգնություն: ՀՀ-ում գործող 32 ՁՊՎ-ներից 8-ը համատեղված է այլ սենյակների հետ: Դրանք են՝ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Թումանյանի, Տաշիրի և Սպիտակի ՁՊՎ-ները, ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի, Նոյեմբերյանի ՁՊՎ, ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՁՊՎ, ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՁՊՎ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Ճամբարակի ՁՊՎ: Այս փաստարկին հակառակ ոստիկանության կողմից նշվում է, որ դրանք սանիտարական վիճակի վրա չեն կարող ազդել և որպես արդարացում նշվում է շենքային պայմանները՝ փաստելով, որ ՁՊՎ շենքերը ժառանգություն են նախկին տարիներից և դրանք նոր չափանիշներով չեն կառուցված :

Դիտորդական խումբը գտնում է, որ դա չի կարող արդարացում լինել : Նման երևույթը անթույլատրելի է և պատասխանատու մարմինները պետք է լուծում գտնեն և բոլոր ՁՊՎ-ների շենքային պայմանները համապատասխանեցնեն ներկայումս գործող ՀՀ իրավական ակտերին, այդ թվում նաև ՁՊՎ ներքին կանոնակարգով նախատեսված պահանջներին:

Խումբը արձանագրում է, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Մարտունու ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Մուշի ՁՊՎ-ում, ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի, Գորիսի ՁՊՎ-ներում, ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի և Արտաշատի ՁՊՎ-ներում, ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակաի և Ապարանի ՁՊՎ-ների բուժսենյակներում արձանագրվել են կեղտոտ բժշկական սավանների առկայության փաստեր, ինչպես նաև կեղտոտ բուժսենյակներ, ինչը համարվում է ՀՀ-ում գործող սանիտարահիգիենիկ կանոնների խախտումներ:

Դիտորդական խումբը ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ ներկայումս առաջարկում է ՀՀ ոստիկանությանը՝

- Մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված անձանց մարմնական վնասվածքները պարտադիր և պատշաճ գրանցել համապատասխան <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում:

- Հրավիրված շտապ օգնության բժիշկների կողմից բուժօգնության արդյունքները պետք է պարտադիր գրանցվեն <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում: Անհրաժեշտ է հրահանգավորել ոստիկանության ծառայողներին հետևել այս կանոնի պահպանմանը և այս խնդրի կապակցությամբ դիմել նաև Առողջապահության նախարարություն:
- Հրավիրված շտապ օգնության բժիշկների կողմից կատարված համապատասխան գրառումները <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում, պետք է հիմք հանդիսանան անձանց պատշաճ՝ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված բուժօգնություն տրամադրելու համար:
- Պետք է միջոցներ ձեռնարկել ՁՊՎ-ների բուժսենյակների սանիտարահիգիենիկ վիճակը պահպանելու ուղղությամբ: Բացառել բուժսենյակների համատեղությունը այլ սենյակների հետ:

4. ԳԼՈՒԽ

Ձերբակալվածների պահման պայմանների մասին վերլուծություն

Պետությունը պարտավոր է ապահովել ձերբակալվածների պահման նվազագույն պայմանները³, որոնք կապահովեն ազատագրված անձանց տարրական պահանջները: Այդ պահանջները իրենց մեջ ներառում են բավարար սննդի տրամադրումը, ՁՊՎ-ների սանիտարահիգիենիկ պայմանները, խցերում բավարար լուսավորությունը, բավարար ջերմաստիճանը և նյութակենցաղային բավարար պայմանները /մաքուր սպիտակեղեն, մաքուր սպասք, հիգիենայի պարագաներ/:

Պետությունը չպետք է հիմնվի նյութական ռեսուրսների և ֆինանսական դժվարությունների վրա, որպեսզի արդարացնի մարդկային արժանապատվությունը նվաստացնող կամ վատ վերաբերմունք առաջացնող համգամանքները, որոնք բխում են պահման վատ պայմաններից:

Այնուամենայնիվ 2015թ-ի ընթացքում արձանագարվել են, որ որոշ ՁՊՎ-ներում չեն ապահովվում տարրական պահման պայմաններ:

Պահման պայմաններում առկա հիմնախնդիրները.

- 8 ՁՊՎ-ների /ՀՀ ոստիկանության Թալինի, Արտաշատի, Արմավիրի, Տաշիրի, Մուշի, Միսյանի, Ապարանի և Երևանի ՁՊՎ-ներ/ որոշ խցերում արձանագրվել է տեսանելի կեղտոտ վիճակ
- 8 ՁՊՎ-ների /ՀՀ ոստիկանության Մուշի, Կապանի, Հրազդանի, Արարատի, Արտաշատի, Եղեգնաձորի, Ապարանի և Գորիսի ՁՊՎ-ներ/ բուժսենյակներում արձանագրվել է հակասանիտարահիգիենիկ վիճակ:
- 2 ՁՊՎ-ների /ՀՀ ոստիկանության Արարատի և Ապարանի ՁՊՎ-ներ/ բուժսենյակների լվացարանները գտնվել են կեղտոտ վիճակում:
- 12 ՁՊՎ-ների /ՀՀ ոստիկանության Արմավիրի, Կոտայքի, Մարտունու, Գավառի, Տավուշի, Տաշիրի, Կապանի, Արարատի, Արտաշատի, Վայքի, Իջևանի և Եղեգնաձորի ՁՊՎ-ներ/ սանհանգույցներում արձանագրվել է հակահիգիենիկ վիճակ:
- 5 ՁՊՎ-ների /ՀՀ ոստիկանության Գավառի, Կապանի, Արարատի և Արտաշատի ՁՊՎ-ներ/ տեսակցության սենյակներում արձանագրվել է փոշոտ վիճակ:

³ ՀՀ Սահմանադրություն, <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենք, ՁՊՎ ներքին կանոնակարգ, Միջազգային իրավական փաստաթղթեր:

- 13 ՁՊՎ-ում / ՀՀ ոստիկանության Գորիսի, Տաշիրի, Կոտայքի, Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Տավուշի, Վաղարշապատի, Արարատի, Վարդենիսի, Թալինի, Արտաշատի և Կապանի ՁՊՎ-ներ/ սննդի տաքացման սենյակում արձանագրվել է փոշոտ, կեղտոտ վիճակ:
- 6 ՁՊՎ-ում / ՀՀ ոստիկանության Կապանի, Արարատի, Արտաշատի, Գավառի, Մարտունու և Թալինի ՁՊՎ-ներ/ քննչական սենյակում արձանագրվել է փոշոտ վիճակ:
- 20 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Գորիսի, Կապանի, Սիսիանի, Վարդենիսի, Երևանի, Տաշիրի, Կոտայքի, Հրազդանի, Նաիրիի, Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արարատի, Արմավիրի, Մարտունու, Եղեգնաձորի, Բջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի և Արտաշատի ՁՊՎ-ներ / որոշ խցերում արձանագրվել է կեղտոտ սպիտակեղեն:
- 7 ՁՊՎ-ի / ՀՀ ոստիկանության Գավառի, Թումանյանի, Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արտաշատի և Կապանի ՁՊՎ-ներ/ սննդի տաքացման սենյակում արձանագրվել է կեղտոտ սպասք:
- 14 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Վարդենիսի, Սպիտակի, Եղեգնաձորի, Բջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Ապարան, Թալինի, Արարատի, Արտաշատի, Ճամբարակի, Մարտունու, Սևանի և Կոտայքի ՁՊՎ-ներ / որոշ խցերում և սենյակներում արձանագրվել է ոչ բավարար բնական լուսավորություն, որին խոչընդոտ է հանդիսանում շենքային դիրքը, կամ վանդակաճաղերի առկայությունը:
- 5 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի, Աշտարակի Արարատի, Կոտայքի և Վաղարշապատի ՁՊՎ-ներ/ որոշ խցերում և սենյակներում արձանագրվել է ոչ բավարար արհեստական լուսավորություն, որին խոչընդոտ է հանդիսանում թույլ շիկացման լամպը, կամ պատսպարիչ վանդակաճաղերի առկայությունը:
- 3 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Տաշիրի, Ապարանի և Կապանի ՁՊՎ-ներ/ որոշ խցերում և սենյակներում ժամանակ առ ժամանակ արձանագրվել է չաշխատող 20 ջրի ծորակներ :
- 6 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Վարդենիսի, Եղեգնաձորի, Վայքի, Ճամբարակի, Գորիսի և Տաշիրի ՁՊՎ-ներ/ սանհանգույցներում արձանագրվել է չաշխատող ջրի ծորակներ:
- 2 ՁՊՎ-ների / ՀՀ ոստիկանության Վայքի և Ճամբարակի ՁՊՎ-ներ / լոգարաններում բացակայում էր տաք ջուրը:

ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու հիմնախնդիրները

ՁՊՎ-ում պահվող անձանց վերաբերյալ հիմնական խնդիր է հանդիսանում նաև նրանց առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սնունդ տրամադրելը:

2014թ-ի ընթացքում Դիտորդական խմբի հետևողականության, մեծ ջանքերի և ուստիկանության պատրաստակամության արդյունքում՝ ՀՀ ուստիկանության պետի հրամանով 2015թ-ի հունվարի 1-ից բարձրացվել է ՁՊՎ-ում պահվող անձի օրեկան տրամադրվող անվճար սննդի գումարի չափը: Նախկին՝ 690 ՀՀ դրամի փոխարեն կտրվի 830 ՀՀ դրամ (20.3% ավելին), հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին 790 ՀՀ դրամի փոխարեն՝ 980 ՀՀ դրամ (24.1% ավելին): Սակայն Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարձրացված գումարի չափը բավարար չէ, երեքանգամյա սնունդով ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց:

Առաջարկություն

- ՁՊՎ-ներում պարբերաբար իրականացնել վերանորոգման և սանիտարահիգիենիկ միջոցառումներ՝ նշված թերությունները վերացնելու և ՁՊՎ-ների պահման պայմանները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար :
- Վերանայել ՁՊՎ-ներում պահվող անձանց տրամադրվող անկողնային պարագաները, սպիտակեղենը, խոհանոցային սպասքը, օճառը, հիգիենիկ թուղթը և այլ պարագաները ՁՊՎ-ներին տրամադրելու կարգը: Նշված իրերը տրամադրել ոչ թե ըստ ՁՊՎ-ների, այլ ըստ ՁՊՎ-ներում պահվող անձանց քանակի:
- ՁՊՎ-ի վարչակազմի հետ հաճախակի կազմակերպել հակահամաճարակային պայմաններ ապահովելու ուղղությամբ դասընթացներ:
- Արդյունավետ մեխանիզմներ մշակել ՁՊՎ-ում օգտագործվող սպիտակեղենը լվանալու ուղղությամբ:
- Հիմք ընդունելով, այն որ անձինք ՁՊՎ-ում պահվում են կարճ ժամանակով, Դիտորդական խումբ առաջարկում է ՁՊՎ-ի սպասքը փոխարինել մեկ անգամյա օգտագործման սպասքով, ինչով կկանխվի վարակների տարածումը, և կլուծվի սպասքի պահպանման և լվացման խնդիրները:
- ՁՊՎ-ների բնական և արհեստական լուսավորությունը բարելավելու նպատակով մանր վանդակաճաղերը փոխարինել ավելի լայներով, ավելորդ վանդակաճաղերը հեռացնել, թույլ լամպերը փոխարինել ավելի հզորներով:
- Կրկին պետք է վերանայել արդեն իսկ բարձրացված սննդի գումարի չափը, որով միևնույն է հնարավոր չէ ապահովվել 3 անգամյա սնունդ՝ որից մեկը տաք:

5. ԳԼՈՒԽ

Ընթացիկ հաշվետվությունների վերլուծություն

2015-ի աշխատանքների ընթացքում Դիտորդական խմբի կողմից ՁՊՎ-ներում արձանագրվել են մի շարք թերություններ և խախտումներ: Արձանագրած իրավախախտումների վերաբերյալ Դիտորդական խումբը հրատապ հաշվետվությունով դիմել է խախտումը կատարած համապատասխան գերատեսչական մարմնին և շահագրգիռ կողմերին՝ անհրաժեշտ գործողություններ կատարելու և իրավախախտումները կանխելու նպատակով:

Ընդհանուր առմամբ 2015թ-ի ընթացքում համապատասխան գերատեսչական մարմիններին և շահագրգիռ կողմերին ներկայացվել է 62 հրատապ հաշվետվություններ:

- ՀՀ ոստիկանություն – 48 անգամ
- ՀՀ քննչական կոմիտե – 8 անգամ
- ՀՀ ոստիկանության իրավական վարչություն– 1 անգամ
- Դատական դեպարտամենտ – 1 անգամ

Ըստ Դիտորդական խմբի՝ ներկայացված Ընթացիկ հաշվետվությունների 89% տրվել են դրական պատասխան՝ համապատասխան թերությունները և խախտումները վերացնելու և կանխարգելիչ մեխանիզմներ կիրառելու ուղղությամբ, 11%-ին տրվել են ոչ բավարար պատասխաններ: Ներկայացրած 11% ոչ բավարար պատասխանները ամբողջությամբ տրվել են ՀՀ ոստիկանության կողմից:

Դիտորդական խմբի կողմից ՀՀ ոստիկանությանը ներկայացրած 48 ընթացիկ հաշվետվությունների ընթացքում խիստ նախազգուշացվել կամ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության 35 ոստիկաններ (որից 13 հերթապահ մասի պետ) ստացել են խիստ նախազգուշացումներ կամ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, որը համեմատած նախորդ՝ 2014թ-ի հետ ավել է մոտ 62%-ով :

Ընթացիկ հաշվետվությունների կարող եք
Դիտորդական խմբի ինտերնետային էջում՝

www.policemonitoring.org

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում 2012թ. նոյեմբերին ՀՀ ոստիկանության պետի հրամանով ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների տարածքային ստորաբաժանումների գործող ձեռքարկվածներին պահելու վայրերը ներառվել են հերթապահ մասերի կառուցվածքում, ինչի կապակցությամբ ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ մասում ստեղծվել է հերթապահ մասերի գործունեության ղեկավարման բաժանմունքը:

Նշված ժամանակահատվածից մինչ օրս ոստիկանության շտաբի կողմից համակարգվել և վերահսկվել է ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ների գործունեությունը, որի արդյունքում արձանագրվել է ակնհայտ դրական առաջընթաց:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ների գործունեության բարելավման գործընթացում իր ուրույն տեղն ունի ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքարկվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ դիտորդների խումբ):

ՀՀ ոստիկանությունը մշտապես սերտ համագործակցության մեջ է գտնվում դիտորդների խմբի հետ, ինչի արդյունքում 2015թ. ընթացքում նույնպես ՁՊՎ-ների գործունեության հետ կապված մի շարք հարցեր ստացել են իրենց դրական լուծումները: Այդ թվում.

- ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի ՁՊՎ-ում կատարվել է հիմնական և թվով 6 բաժինների ՁՊՎ-ներում մասնակի վերանորոգման աշխատանքներ,
- ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդի ձեռք բերման համար գումարի չափը բարձրացվել է, այն դարձնելով 830 դրամ (նախկին 690 դրամից), իսկ հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին՝ 980 դրամ (նախկին 790 դրամից): Նշված ավելացումները կիրառվում են 2015թ. հունվարի 1-ից,
- ՁՊՎ-ներում անձանց պահելու օրենքով սահմանված 72 ժամը չխախտելու, կալանավորված անձանց օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան՝ որոշումներով ՁՊՎ ընդունելու, ՁՊՎ ընդունվող անձանց մարմնական վնասվածքների առկայությունը ի հայտ բերելու նպատակով պատշաճ կերպով մարմնի արտաքին զննություն կատարելու, դրանց հայտնաբերման դեպքում բուժաշխատող հրավիրելու և այդ մասին վարույթն իրականացնող մարմնին իրազեկում տալու, ինչպես նաև բազմաթիվ

այլ հարցերի վերաբերյալ թվով 5 շրջաբերական հանձնարարականներ են տրվել ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներին, ինչի արդյունքում վերը նշված հարցերին տրվել են դրական լուծումներ:

ՁՊՎ-ներում տեղ գտած թերություններն ու բացթողումները բացառելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչության ղեկավարության նախաձեռնությամբ և մասնակցությամբ ՁՊՎ-ների գործունեության ղեկավարման բաժանմունքի ծառայողները ծառայողական պարապմունքներ անցկացնելու և անձնակազմին գործնական-մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով այցելություններ են կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Շիրակի, Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի և Տավուշի մարզային վարչություններ ու ենթակա ստորաբաժանումներ: Այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են ՁՊՎ-ների գործունեությունը, որի ընթացքում արձանագրված մի շարք թերություններ վերացվել են տեղում, իսկ մնացածը շտկելու համար գրավոր հանձնարարականներ են ուղարկվել վերը նշված մարզային վարչություններ:

Նշված գործընթացը կրում է շարունակական բնույթ:

1. Գլուխ

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը հետամուտ է Խոշտանգումների կանխարգելման ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանը: Այդ նպատակով ՀՀ ոստիկանության համակարգում իրականացվում են համալիր միջոցառումներ թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակներում: Այս հարցում յուրաքանչյուր դեպքում հաշվի են առնվում Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) և ՄԱԿ-ի զեկոյցները, ինչպես նաև ոլորտի վերաբերյալ այլ միջազգային չափանիշներ:

Խոշտանգումների դեպքերը ի հայտ բերելու և բացառելու նպատակով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի» 13-րդ կետի համաձայն՝ ՁՊՎ ընդունվող անձանց մարմնի արտաքին զննության ժամանակ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում հրավիրվում է բուժաշխատող, որը անհապաղ կատարում է բուժզննություն և համապատասխան գրանցամատյանում արձանագրում է մարմնական վնասվածքները: ՁՊՎ-ի վարչակազմը մարմնական վնասվածքների մասին իրազեկում է վարույթն իրականացնող մարմնին, որի կապակցությամբ իրականացվում է քննություն մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքները պարզելու համար:

Հարկ է նշել, որ ինչպես դիտորդների խմբի, այնպես էլ ոստիկանության վերադաս ծառայությունների կողմից արձանագրվել են որոշ դեպքեր, երբ ՁՊՎ վարչակազմը թերացել է վերը նշված իրավական ակտերի պահանջների լիարժեք կատարման մեջ, ինչի համար կատարվել են ծառայողական քննություններ և իրենց գործառության պարտականությունների մեջ թերացած ոստիկանության ծառայողները խիստ նախազգուշացվել կամ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Ինչ վերաբերվում է մարմնական վնասվածքները «Ստամբուլյան արձանագրությամբ» առաջարկվող մեթոդաբանության համապատասխան արձանագրելուն, ապա այն ավելի վաղ մերժվել է ՀՀ ոստիկանության կողմից՝ հիմնավոր պատճառաբանությամբ:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է մարմնական վնասվածքները արձանագրվում են հրավիրված բուժաշխատողի կողմից, որը մարմնական վնասվածքները արձանագրում է իրեն վերապահված գործառույթների շրջանակներում և այդ գործընթացին որևէ այլ միջամտություն անթույլատրելի է:

Ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ներում 2015թ. մարմնական վնասվածքներով ընդունվածների թվի աճը 2014թ. համեմատ պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից հանձնարարական է տրվել տեղերին՝ մանրագնին կատարել մարմնի արտաքին զննությունը և ամենաչնչին մարմնական վնասվածքների հայտնաբերման դեպքում էլ հրավիրել բուժաշխատող ու այդ մասին իրագեկել վարույթն իրականացնող մարմնին:

Տեղեկացվում է, որ ՀՀ ոստիկանության համակարգի բոլոր ՁՊՎ-ներում էլ մարմնական վնասվածքները պատշաճ կերպով արձանագրվել են և նույնքան իրագեկումներ են տրվել վարույթն իրականացնող մարմիններին: Ոստիկանության կողմից տրված իրագեկումների թվի չհամապատասխանելը ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված և դիտորդների խմբի հավաքագրած թվերի հետ պայմանավորված է այն հանգամանքով, որ բացի ՔԿ-ից, իրագեկումներ տրվում են նաև այլ գերատեսչությունների վարույթ իրականացնող մարմիններին:

Հարկե նշել, որ դիտորդների խմբի հավաքագրած տվյալները, որը գետեղված է հաշվետվության 12-րդ էջի աղյուսակում ընդհանրապես չի համապատասխանում իրական թվերի հետ և անհասկանալի է, թե դիտորդների խումբը այդ թվերը որտեղից է վերցրել:

ՀՀ ոստիկանության կողմից մարմնական վնասվածքների վերաբերյալ ներկայացված թվերը ստուգված են և իրական, իսկ մարմնական վնասվածքները թաքցնելու կամ ոչ պատշաճ հավաքագրելու վերաբերյալ դիտորդների խմբի կասկածները անտեղի են և ոչ հիմնավոր:

ՀՀ ոստիկանությունը համամիտ չէ նաև այն մտքի հետ, որ դիտորդների խումբը ձերբակալվածների մարմնական վնասվածքները ուսումնասիրելով, դրանք ըստ տեսակների տարանջատելով ենթադրաբար հայտարարում է, թե իբր մարմնական վնասվածքները ոստիկանությունում հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հետևանք են: Արդեն իսկ վերը նշվել է, որ մարմնական վնասվածքի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքով իրագեկվում է վարույթն իրականացնող մարմիններին, որոնց կողմից կատարվում է օբյեկտիվ քննություն: Ինչ վերաբերվում է քննության ընթացքին հանրային վերահսկողության մեղանիզմ ներդնելուն, ապա դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ ինչպես վերը նշվել է քննությունը իրականացվում է ոստիկանությունից անկախ վարույթն իրականացնող մարմինների կողմից, որոնց գործողություններն իր հերթին վերահսկվում են ՀՀ դատախազության կողմից:

Այսպիսով, ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներում հասարակական վերահսկողություն իրականացնելու դիտորդների խմբի առաջարկը անընդունելի է, իսկ մարմնական վնասվածքները <<Ստամբուլյան արձանագրության>> համապատասխան արձանագրելու համար առաջարկվում է

դիմել ՀՀ առողջապահության նախարարությանը, քանի որ ՁՊՎ-ներ ընդունվող անձանց մարմնական վնասվածքները արձանագրվում են հրավիրված բուժաշխատողների կողմից:

2. Գլուխ

Դիտորդների խմբին հայտնվում է, որ 2015թ. վեց ամիսների (առաջին կիսամյակի) ընթացքում ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահվել է ոչ թե 642 այլ 616 ձերբակալված անձ, որոնցից ոչ թե 244 այլ 278 ձերբակալվածներ ազատ են արձակվել:

Ոստիկանության բաժին բերման ենթարկված, ձերբակալված և ազատ արձակվածների թվերի հետ կապված դիտորդների խմբի մտահոգությունը փարատելու համար տեղեկացվում է, որ անձը կարող է բաժին բերման ենթարկվել տարբեր պատճառներով, օրինակ՝ անձի ինքնությունը ճշտելու, մատնահետքեր վերցնելու, բացատրություն վերցնելու և այլն: Նշված գործողությունները ավարտելուց հետո բնականաբար նման անձինք ազատ են արձակվում, եթե ի հայտ չեն գալիս նրանց ձերբակալելու համար բավարար կասկածներ: Անձանց ձերբակալման և հետո ազատ արձակման վերաբերյալ հարկ է նշել, որ ձերբակալվածների մի ստվար հատված ձերբակալվում է օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով հետախուզման մեջ գտնվելու համար, ովքեր հետո ազատ են արձակվում և ներկայացվում են զինվորական կոմիսարիատներին: Այսինքն, հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից ձերբակալումը իրականացվում է բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 128-րդ հոդվածի պահանջներին համապատասխան և ձերբակալման գործընթացը չի կարող հանդիսանալ որպես պատժի միջոց:

Հաշվետվությունում աղյուսակի տեսքով ներկայացված (էջ 18) տեսակցության, հեռախոսազանգի, լոգանքի, հանձնուքի վերաբերյալ տվյալները ակնհայտ խոսում են այն մասին, որ նշված գործառույթների թիվը 2014թ. համեմատ 2015թ. աճել է, որն անկասկած դիտորդների խմբի և ոստիկանության համատեղ արդյունավետ աշխատանքի արդյունքն է և իհարկե ողջունելի, իսկ փաստաբան ունենալու իրավունքի թվի նվազման վերաբերյալ տրվում է հետևյալ մեկնաբանությունը.

Քրեական հետապնդման մարմնի կողմից յուրաքանչյուր ձերբակալվածի ծանոթացվում են իրենց իրավունքների՝ այդ թվում նաև փաստաբան ունենալու մասին, ինչն իր ստորագրությամբ հաստատում է ձերբակալվածը: Ուստի, վստահ կարելի է նշել, որ փաստաբանական

ծառայությունից օգտվող ձեռքբերվածների թվի նվազումը պայմանավորված է նրանց իսկ կողմից այդ ծառայությունից հրաժարվելու հանգամանքով:

ՁՊՎ-ներում անձանց արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված ժամկետի պահպանումը մշտապես գտնվում է ոստիկանության ուշադրության կենտրոնում: Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից, ինչպես բանավոր այնպես էլ գրավոր հանձնարարականներ են տրվել ՁՊՎ-ների վարչակազմերին: Չնայած այդ հանգամանքին 2015թ. ընթացքում արձանագրվել են ձեռքբերվածների արգելանքի տակ պահելու ժամկետի խախտման դեպքեր, որոնք թույլ են տրվել ոչ թե միտումնավոր, այլ թյուրիմացաբար ժամկետները սխալ հաշվարկելու պատճառով, ինչի համար կատարվել են ծառայողական քննություններ և պատասխանատու ոստիկանները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՁՊՎ-ի գրանցամատյաններում գրառումների ճիշտ և առանց ջնջումների կատարման նպատակով նույնպես համապատասխան հանձնարարականներ են տրվել ՁՊՎ-ների վարչակազմերին, քանի որ 2015թ. ընթացքում արձանագրվել են նման թերացումներ: Այդ կապակցությամբ նույնպես ՁՊՎ-ների մի շարք ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ անհամեմատ բարելավվել է գրանցամատյանների վարման կարգը: Անշուշտ եղել են որոշակի փոքրիկ ջնջումներով կատարված գրառումներ, որոնք կատարվել են ՁՊՎ վարչակազմերի անուշադրության հետևանքով, այլ ոչ թե արգելանքի տակ վերցնելու կամ ձեռքբերվածների ժամերը թաքցնելու նպատակով, ինչպես նշվել է դիտորդների խմբի կողմից:

Հաշվետվությունում դիտորդների խմբի կողմից, որպես օրինակ նշվել է, որ ոստիկանության Արտաշատի բաժնի ՁՊՎ-ում թվով 4 ձեռքբերվածների արգելանքի տակ պահելու սահմանված ժամկետը գերազանցվել է մի քանի ժամով: Հայտնվում է, որ նշված հանգամանքի վերաբերյալ դիտորդների խմբի 01.04.2015թ. թիվ 2621/1522 ընթացիկ հաշվետվությանը ՀՀ ոստիկանության կողմից 06.05.2015թ. թիվ 2/2-1-1440 գրությամբ արդեն իսկ տրվել է մեկնաբանություն, որ ձեռքբերվածներ Ա.Հ-ն, Ա.Ա-ն, Մ.Օ-ն և Լ.Ք-ն ոստիկանության Արտաշատի բաժին բերման են ենթարկվել 08.02.2015թ. ժամը 10.40-ին և մինչև օրենքով սահմանված երեք ժամը լրանալը՝ ժամը 12.00-ին ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արտաշատի քննչական բաժին, որտեղ քննիչի կողմից ձեռքբերվել են և տեղափոխվել ՁՊՎ: Մինչև ձեռքբերվելը վերը նշված անձանց ազատությունը չի սահմանափակվել, նրաք ունեցել են ազատ տեղաշարժվելու իրավունք և քանի որ չեն հանդիսացել Արտաշատ քաղաքի բնակիչներ, ժամանակին նախաքննության մարմին ներկայանալու նպատակով մինչև ձեռքբերվելը գտնվել են Արարատի մարզային քննչական վարչության և հարակից տարածքներում: Հաջորդիվ

վերջիններս ներկայացել են նախաքննության մարմին, որտեղ ձերբակալվել են ու տեղափոխվել ՁՊՎ, իսկ ՁՊՎ վարչակազմի կողմից նրանց արգելանքի տակ պահելու ժամանակը հաշվվել է ձերբակալման ժամից և սահմանված 72 ժամը չի խախտվել:

Ինչ վերաբերվում է ոստիկանության Արմավիրի և Գավառի բաժինների ՁՊՎ-ներում ձերբակալվածներին սահմանված 72 ժամից ավել արգելանքի տակ պահելուն, ապա ինչպես վերը նշվել է նման դեպքեր արձանագրվել են և պատասխանատու ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Վերը նշված հանգամանքների վերաբերյալ դիտորդների խմբի առաջարկությանը ի պատասխան հայտնվում է, որ ոստիկանությունը իր գործառնության պարտականությունները կատարում է գործող օրենսդրության և նորմատիվ ակտերի համաձայն, որը համահունչ է դիտորդների առաջարկին:

Քննիչների կողմից կատարված խախտումների վերաբերյալ մեկնաբանություններ ստանալու համար առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կատարված բազմաթիվ ստուգումների և ուսումնասիրությունների ժամանակ որևէ անգամ չի արձանագրվել, որ ձերբակալվածների անձնական գործերը կազմված լինեն թերի: Դիտորդների խումբը նույնպես 2015թ. ընթացքում չի անդրադարձել այդ հարցին և այժմ անհասկանալի է, թե ինչն է հիմք հանդիսացել դիտորդների խմբի համար նշելու, որ անձնական գործերը կազմվում են թերի: Այդ հանգամանքը ՀՀ ոստիկանության կողմից չի հիմնավորվել, հետևաբար մեկնաբանություններ չեն տրվում:

ՀՀ ոստիկանությունը համամիտ չէ նաև դիտորդների խմբի այն պնդմանը, որ հանձնույթները ժամանակին չեն ընդունվում և լիարժեք չեն կազմակերպվում հարազատների հետ տեսակցությունները: 2015թ. ընթացքում հանձնույթների վերաբերյալ ընդհանրապես խոսք չի եղել, իսկ տեսակցություն չտրամադրելու վերաբերյալ արձանագրվել է երկու դեպք, որոնցից մեկը չի տրամադրվել, քանի որ քննիչը հեռախոսազանգով ՁՊՎ վարչակազմին տեղեկացրել է, որ տվյալ ձերբակալվածի տեսակցությունը արգելված է հավելելով, որ այդ մասին որոշում ուղարկել է փոստով: Երկրորդ դեպքում էլ տեսակցության տրամադրման մասին ՁՊՎ վարչակազմին առաջին օրը դիմել է ձերբակալվածը, այլ ոչ թե հարազատները, իսկ երկրորդ օրը նրա հարազատները տեսակցություն տրամադրելու հարցով դիմել են ՁՊՎ վարչակազմին և այն բավարարվել է սահմանված կարգով: Սահմանված կարգի համաձայն ձերբակալվածների հարազատների կողմից հանձնույթների ընդունման վերաբերյալ դիմումներ ներկայացնելու դեպքերում ՁՊՎ-ների վարչակազմերը առանց խոչընդոտների ընդունում են հանձնույթները և անմիջապես հանձնում ձերբակալվածներին: Նույն ձևով տրամադրվում են նաև տեսակցությունները հարազատների հետ,

Եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից տեսակցության իրավունքը արգելված չէ կամ ձերբակալվածը դիմումով տեսակցությունից չի հրաժարվել, այն հեռախոսազրույցով փոխարինելու նպատակով:

Գրանցամատյաններում ջնջումներով գրառումներ կատարելու մասին արդեն վերը նշվել է, իսկ ինչ վերաբերվում է ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելիս կամ մի հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելիս ձերբակալվածի կողմից ընտրած անձին հեռախոսազանգով պատշաճ տեղյակ չպահելուն, ապա տարվա ընթացքում արձանագրվել է մեկ-երկու այդպիսի դեպք, որի համար ոստիկանության պատասխանատու ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: ԵՎ ընդհանրապես ՁՊՎ-ների վարչակազմերի կողմից կատարված բոլոր խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանությունում ու դրանց տրվել են համապատասխան իրավական գնահատական:

ՁՊՎ-ներում տեղ գտած խախտումներն ու թերությունները բացառելու ուղղությամբ ՀՀ ոստիկանության շտաբի, ինչպես նաև Երևան քաղաքի ու մարզային վարչությունների վերադաս ծառայությունների կողմից ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ իրականացվում է մշտական հսկողություն: ՁՊՎ-ների վարչակազմերի հետ պարբերաբար անցկացվում են սեմինար պարապմունքներ, որոնց ժամանակ ուսումնասիրվում են ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը և նրանց ցուցաբերվում է գործնական-մեթոդական օգնություն:

3. Գլուխ

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ները ընդունվող ձերբակալվածների մարմնի արտաքին զննությունը կատարվում է ՁՊՎ վարչակազմի ծառայողների կողմից: ՁՊՎ ընդունվող անձանց մոտ մարմնական վնասվածքներ և ակնհայտ հիվանդության նշաններ չհայտնաբերելու կամ վերջիններիս կողմից առողջության վերաբերյալ գանգատներ չհայտնելու դեպքերում ՁՊՎ վարչակազմի կողմից այդ մասին գրառումներ են կատարվում «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» ձև 12 գրանցամատյանում, որն իր ստորագրությամբ հաստատում է նաև ՁՊՎ ընդունվող անձը:

Ավելորդ չէ, ևս մեկ անգամ նշել, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի» 13-րդ կետի պահանջների և Եվրոպայի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) պահանջների համաձայն անկախ ՁՊՎ ընդունվող անձանց ցանկության նրանց մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատներ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի:

Ի հավելումն նշվում է, որ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների վարչակազմերին հանձնարարվել է ամենաչնչին մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում էլ հրավիրեն բուժաշխատողի, որը ձերբակալվածին կցուցաբերի անհրաժեշտ բուժօգնություն և մասնագիտորեն կարձանագրի նաև մարմնական վնասվածքի բնույթն ու տեղակայումը մարմնի վրա: Այսինքն, մարմնական վնասվածքները տեսնելու և բուժաշխատող հրավիրելու անհրաժեշտությունը հասկանալու համար ոստիկանության ծառայողները բարձրագույն բժշկական կրթության կարիք չունեն: Փոխարենը վերջիններս ծառայողական պարապմունքների ժամանակ պարբերաբար ուսումնասիրում են առաջին բուժօգնություն ցուցաբերելու ձևերն ու մեթոդները, ինչը թույլ է տալիս նրանց ճիշտ կողմնորոշվել մարմնական վնասվածքները հայտնաբերելու և բուժաշխատող հրավիրելու գործում:

Հանձնարարվել է նաև, որ ՁՊՎ վարչակազմը հետամուտ լինի հրավիրված բուժաշխատողների կողմից «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանում գրառումները կատարվեն ճիշտ և բացառապես հայերեն լեզվով, սակայն ոչ բոլոր դեպքերում է այն հաջողվում, քանի որ բուժաշխատողները իրենց պարտականությունները կատարում են ըստ իրենց իմացության և մասնագիտական պատրաստվածության, իսկ օտար

լեզվով գրառումներ կատարած բուժաշխատողները պատճառաբանել են, որ չեն կարող գրառումները կատարել հայերեն լեզվով, քանի որ կրթություն ստացել են օտար լեզվով:

Մարմնական վնասվածքներ հայտնաբերելու, ակնհայտ հիվանդության և գանգատներ լինելու դեպքում, երբ հրավիրված բժշկի կողմից նշվում է, որ համապատասխան հետազոտություն անցնելու անհրաժեշտություն կա, ապա այդ պահանջը կատարվում է, իսկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատությունում ստացիոնար բուժում ստանալու համար՝ տեղափոխվում են նշված բուժհաստատություններ բժշկի տված **համապատասխան եզրակացության** հիման վրա՝ ստորաբաժանման պետի որոշմամբ, եթե բուժզննություն անցնելուց անմիջապես հետո ձերբակալված կամ կալանավորված անձիք ՁՊՎ-ից չեն տեղափոխվում: Այսինքն, ձերբակալված կամ կալանավորված անձանց մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություններ տեղափոխելու համար հիմք է հանդիսանում բուժաշխատողների կողմից տրված եզրակացությունը, այլ ոչ թե այն գրառումը, որը նրանց կողմից կատարվում է <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: Նշված գրանցամատյանը հանդիսանում է ՁՊՎ-ի փաստաթուղթ և այն չի կարող դուրս հանվել ՁՊՎ-ից՝ նրա մեջ կատարված գրառումն որպես հիմք, այլ բուժհաստատությունում ցույց տալու համար:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի կողմից նշված այն հանգամանքին, որ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնում հրավիրված բուժաշխատողը բուժօգնություն ցուցաբերելու և մարմնական վնասվածքների վերաբերյալ գրառումներ չի կատարել <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, ապա հայտնվում է, որ այդպիսի դեպքերը հանդիպում են հազվագյուտ և դրա պատասխանատվությունը ընկնում է ՁՊՎ-ի պատասխանատու ոստիկանի վրա, քանի որ վերադաս մարմինների կողմից նրանց հանձնարարված է, որ հետևողական լինեն, որպեսզի հրավիրված շտապ օգնության բուժաշխատողները ձև 12 գրանցամատյանում բուժօգնության և մարմնական վնասվածքների վերաբերյալ գրառումները կատարեն լիարժեք և հայերեն լեզվով:

Նման դեպքերով կատարվում է ծառայողական քննություն և պատասխանատու ոստիկանները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության: Հետևաբար կարելի է վստահ նշել, որ նման դեպքերը կատարվում են ոչ թե միտումնավոր, այլ անուշադրության հետևանքով: Ուստի դիտորդների խմբի կողմից ներկայացված այն միտքը, որ ոստիկաններն ու բուժաշխատողները ձև 12 գրանցամատյանում միտումնավոր չեն արձանագրում բուժզննության արդյունքները և մարմնական վնասվածքները, հիմնավոր չէ:

Դիտորդների խմբի կողմից արձանագրվել է նաև, որ ՁՊՎ ընդունվող անձանց վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում նշվել է

<<գանգատներ չունի>> սակայն նրանք ստացել են բուժօգնություն: Ինչպես բազմիցս նշվել է, ՁՊՎ ընդունվող անձանց մոտ մարմնական վնասվածքներ, ակնհայտ հիվանդության նշաններ կամ առողջության վերաբերյալ գանգատներ չլինելու դեպքում ձև 12 գրանցամատյանում համապատասխան (գանգատներ չունի) գրառումները կատարվում են ՁՊՎ վարչակազմի կողմից, որը վավերացվում է ՁՊՎ ընդունվող անձի կողմից՝ ստորագրությամբ: Հետագայում, եթե նույն ձերբակալված կամ կալանավորված անձը գանգատվում է առողջությունից, ապա հրավիրվում է բուժաշխատող, ցուցաբերվում է բուժօգնություն, ինչի մասին վերջինիս վերաբերյալ նախկինում կատարված գրառման ներքո բուժօգնության մասին կատարվում է նոր գրառում:

ՁՊՎ-ների բուժսենյակներն այլ սենյակների հետ համատեղված լինելու մասին խոսվել է բազմաթիվ անգամներ և ՀՀ ոստիկանությունը ոչ թե արդարացել է կամ արդարացման կարիք ունի, այլ ներկայացրել է այն պարզ պատճառը, որ շենքային պայմաններից ելնելով բուժսենյակը կարող է համատեղված լինել այլ սենյակի հետ և այդ հանգամանքը խոչընդոտ չի հանդիսանում բուժօգնություն կամ բուժօգնություն իրականացնելու գործընթացին:

Ինչ վերաբերվում է բուժսենյակում սանիտարահիգիենիկ կանոնների խախտմանը, ապա նման փաստեր արձանագրվելու դեպքում կձեռնարկվեն գործուն միջոցներ դրանք վերացնելու և կանխելու համար:

Վերը նշված հանգամանքների վերաբերյալ դիտորդների խմբի կողմից արված առաջարկությունը բխում է ՁՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերի պահանջներից, որոնց համապատասխան էլ իրականացվում է ՁՊՎ գործունեությունը:

4. Գլուխ

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ների գործունեությունը 2012թ. նոյեմբերի 25-ից ղեկավարվում է ՀՀ ոստիկանության շտաբի կողմից: 2015թ. ՁՊՎ-ների գործունեությունում գրանցվել է շոշափելի առաջընթաց կապված անձանց ընդունելու և պահելու, նյութակենցաղային պայմանների, սննդի, բուժապասարկման և ձերբակալման ընթացքում նախատեսված այլ իրավունքների ապահովման հետ:

Թվով 6 ՁՊՎ-ներում (Արարատի, Տաշիրի, Սիսիանի, Ճամբարակի, Դիլիջանի բաժինների և Երևան քաղաքի վարչության) կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ: Ավարտվել են Մասիսի բաժնի ՁՊՎ-ում կատարվող հիմնական վերանորոգման աշխատանքները, որը 2016թ. հունվարի 1-ից ՀՀ ոստիկանության պետի հրամանով հանձնվել է շահագործման:

ՁՊՎ-ների լոգարաններում տաք ջուր ապահովելու համար տեղադրվել են էլեկտրական տաքացուցիչներ և գազի կաթսաներ, իսկ ՁՊՎ-ներում մշտական խմելու ջուր ապահովելու համար տեղադրվել են ջրի բաք և մղիչ պոմպեր:

ՁՊՎ-ների խցերում արհեստական լուսավորությունը ապահովելու նպատակով տեղադրվել են հզոր էլեկտրական շիկացման լամպեր:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ների ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակին, խցերի և մյուս սենյակների ջրի ծորակների չգործելուն, սպիտակեղենի կեղտոտ լինելուն, սննդի տաքացման սենյակում սպասքի կեղտոտ լինելուն, բուժզննության և մյուս սենյակների փոշոտ լինելուն, ապա նշված թերությունները հազվադեպ են լինում, որոնք տեղում վերացվում են: Նման թերություններ արձանագրվելուց հետո պատասխանատու ծառայողները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար և որակյալ սննդով ապահովելու հարցը մշտապես գտնվում է ՀՀ ոստիկանության ուշադրության կենտրոնում:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու գումարի ավելացման հարցը բազմաթիվ անգամ բարձրացվել է նաև դիտորդների խմբի կողմից, ինչը նույնպես իր կարևոր նշանակությունն է ունեցել այդ հարցին դրական լուծում տալու համար: Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից վերլուծության են ենթարկվել ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակայության տակ գտնվող ՁՊՎ-ներ փաստացի առաքվող սննդամթերքների՝ ըստ տեսականու, շուկայական միավոր գների

հաշվարկները, կազմվել է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց, որոնք ուղարկվել են ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն, այն քննարկելու ու ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար նախատեսված գումարի չափը բարձրացնելու նպատակով: Արդյունքում ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող յուրաքանչյուր անձին հասանելիք մեկ օրվա անվճար սննդի ձեռք բերման համար գումարի չափը բարձրացվել է, այն դարձնելով 830 դրամ (նախկին 690 դրամից), իսկ հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին՝ 980 դրամ (նախկին 790 դրամից): Նշված ավելացումները ներառվել են ՀՀ ոստիկանության 2015թ. բյուջեում և կիրառվում են հունվարի 1-ից:

Վերը նշվածների վերաբերյալ դիտորդների խմբի կողմից արված առաջարկները մշտապես գտնվում են ոստիկանության ուշադրության կենտրոնում և միջոցներ են ձեռնարկվում դրանք կյանքի կոչելու համար:

5. Գլուխ

ՀՀ ոստիկանության շտաբում 2015թ. ընթացքում ստացվել են դիտորդների խմբի կողմից ներկայացված 2014թ. տարեկան և 29 ընթացիկ հաշվետվություններ, ինչպես նաև ՁՊՎ-ների գործունեությանը վերաբերվող 17 գրություններ, որոնք քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում, ինչպես նաև Երևան քաղաքի ու մարզային վարչություններում և տրվել են հանգամանալից մեկնաբանություններ: Ընթացիկ հաշվետվություններում արծարծված խախտումներն ու թերությունները բացառելու նպատակով թվով 5 շրջաբերական հանձնարարականներ են տրվել ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին:

Պրակտիկան ցույց է տվել, որ դիտորդների խմբի կողմից ՁՊՎ-ներ կատարած այցելությունները նպաստում են ի հայտ բերել տեղ գտած թերությունները և խախտումներն, որոնք ընթացիկ հաշվետվությունների միջոցով ներկայացվում են ՀՀ ոստիկանություն և դրանց տրվում են դրական լուծումներ: Ցավոք դիտորդների խումբը անհասկանալի պատճառով ոստիկանության կողմից տրված մեկնաբանությունների 11 %-ը որակել է որպես ոչ բավարար պատասխան: Մակայն հարկ է նշել, որ ոստիկանության կողմից տրված մեկնաբանությունները հիմնված են կատարված ծառայողական քննությունների, ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների վրա և հազիվ թե լինեն ոչ բավարար:

Ամեն դեպքում, ոստիկանությունը բարձր է գնահատում 2015թ. ընթացքում դիտորդների խմբի հետ աշխատանքը, որի արդյունքում համատեղ ջանքերով իրականացվել են մի շարք բարեփոխումներ թե ՁՊՎ-ների և թե ոստիկանության բաժինների հերթապահ մասերի գործունեությունում:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ